печать
84 2/26

11.478

84 2/26

ՀԱՄԱՌՕՏ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ Ի ՌՈՒՍԱՑ ԼԵԶՈՒԷ Ի ՀԱՅՍ·

КРАТКАЯ РОССІЙСКАЯ ГРАММАТИКА

ВЪ ПОЛЬЗУ

АРМЯНСКАГО ЮНОШЕСТВА.

Армянскаго Лазаревскаго Института Восточныхъ языковъ

ՀԱՄԱՌՕՏ
ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ
Ի ՌՈՒՍԱՑ ԼԵԶՈՒԷ Ի ՀԱՅ.

Աշխատասիրութ.

Աբրահամ արքեպիսկոպոսի Աստուածատուրեան վաղարշապատեցւոյ ՚ի միաբանութենէ
Մեծ աթոռոյն Էջմիածնի.

Ի Հայրապետութեան Վեմակերտ Սրբոյ Գահին Էջմիածնի՝ Տն
ԵՓՐԵՄԱՅ առաջնոյ՝ Երեց-Երանեալ քահանայապետի և
Սրբազնակատար Կաթուղիկոսի ամ. Հայոց.

Տպագրեալ բարձու Հրամանաւ նոյն գերերջանիկ Վեհապետին.

Յամի տեառն 1827. և ՚ի հայոց թուականին ՌՄՀԶ.

Ի ՄՈՍԿՈՎ.
Ի Տպարանի Օգոստոսեան Սեմէնի.

КРАТКАЯ
РОССІЙСКАЯ ГРАММАТИКА
ВЪ ПОЛЬЗУ
АРМЯНСКАГО ЮНОШЕСТВА,
ТЩАТЕЛЬНО И ЯСНО
СЪ АРМЯНСКИМЪ ПЕРЕВОДОМЪ
РАЗПОЛОЖЕННАЯ
АРМЯНСКИМЪ ІЕРОДІАКОНОМЪ
Авраамомъ Богдановымъ Вагаршападскимъ.

МОСКВА.
ВЪ ТИПОГРАФІИ АВГУСТА СЕМЕНА,
ПРИ ИМПЕРАТОРСКОЙ МЕДИКО-ХИРУРГИЧЕСКОЙ АКАДЕМІИ.

1827.

Гос. Историч. Научн. Б-ка
НКП РСФСР
Инвент. № 310711
192 г.

Սրբազնակատար Հայրապետի՝ և Երից Երանեալ պատրիարգ Կաթուղիկոսի ամենայն հայոց Տ՟ն Տ՟ն ԵՓՐԵՄԻ առաջնոյ՝ Ամենողորմ Բարերարի.

Ամենայն խոնարհութ՟ք նուիրումն ։

Քաջայայտ է լուսափայլ մտաց Ա՟ծընտիր Վեհապետութեան Ձերոյ. զի 'ի պէսպէս առաքինութիւնս և 'ի բազմապատիկ գործս հանճարականս Ա՟Յ, ո՛չ սակաւ պանծալ գործ երախտագիտութեան. զոր ցանգ ուսանիմք յԱ՟ծեղէն տառից ճանաչել, թէ յումմէ՞ իցէ այն ։

Նմին իրի արժանի արտասուաց համարին, որք զանցանեն զայսու պատուիրանաւ. և ապախտ առնեն զպատգամ և զհրաման մեծվայելչութեան բարերար Տ՟ն Ա՟Յ ։

Յայն սակս ընթադրեալ իմ ը՟ պարտեօք 'ի հոգեշահ խրատուց ն՟ք գրոց, հարկ յանձին կալայ զայս դժուարաքիրտն գործ փոխադրել 'ի Ռուսաց լեզուէ 'ի Հայ, և նուիրել ամենապատկառ դիմօք գերահրաշակ Անուան գերերջանիկ Վեհապետութեան Ձերոյ, զի թերևս սովին ը՟ իմիք մարթասցայց երախտահատոյց գտանիլ յոքնօրինակ բարերարութեանց և երախտեաց Վեհափառ Տէրութեան Ձերոյ՝ զորս բարերարեցիք ինձ ը՟ ժամանակս ժամանակս ։

Այս ուրեմն մաղթեմ արժանի առնել զայս գործ ընդամանեայ աշխատասիրութեան ընդունելութեան հաճութեան կամաց բազմերախտ Տէրութեան Ձերոյ. և յօժարակամ մտօք հրաման տալ 'ի լոյս ընծայել տպագրութ՟ն

՚ի պէտս լուսածին զաւակաց լուսատու մօր մերոյ սրբոյ և մեծի Ս. Աթոռոյս և անախտ խնկաւէտ փեսայիւ նորին. որով արդարև Տէ՛ր իմ խնամակալ, ունիք առնել զիս բարեբաստիկ ՚ի ծնունդս համակ երկրածնաց. և տալ պատճառս յես կարևորս ձեռնամուխ լինելոյ յօգուտ և ՚ի զուարճունս ուխտի մանկանց եկեղեցւոյ և ՚ի քաջալերուն մտաց սրտի իմոյ. որ կամ և մնամ;

Սրբազնակատար Վեհապետութեան Ձերոյ

յետին պաշտօնեայ

Ն. Էքրոհամ տեառքեռ Սարկաւագ

Ն. Ծատուրեան Վ. ողորմագործեցէ.

Յամի Տեառն 1822.
՚ի յունվարի 1.
յամրոցս Շուշի.

ՆԱԽԵՐԳԱՆՔ

Առ աստուածասէր ընթերցողս ։

Գեղեցիկս գրեաց՝ որ գրեացն, լաւ է կոյր աչօք, քան կոյր մտօք․ ահաւասիկ վճիռ իմաստուն և խորատ օգտաշահ կենաց մարդկան․ զոր պէտք են իւրաքանչիւր ումեք արձանագրել յանդիման աչաց մտաց իբրև 'ի պատկերի․ և ստէպ ստէպ վերծանութբ տպաւորել խորագոյնս 'ի յիշողութեան իւրում 'ի լուսաւորութիւն մտաց և յօգուտ անձին ։

Այլ են՝ են զգալի զգալի թշուառութիւնք 'ի կեանս մարդկան․ ըստ որում կուրութիւն մարմնոյ աչաց և այլ այսպիսի չար դիպուածք․ այլ՝ կուրութիւն աչաց մտաց [illegible], չար ևս․ և յետին թշուառութիւն համարելի․ վասն զի կուրութիւն աչաց մարմնոյ ոչ եղծանէ մասն մտաւորական․ այլ՝ միայն նիւթական․ և անդրադարձեալ․ կուրութիւն աչաց մտաց չարաչար եղծանէ և վնասէ ոչ միայն մասն մտաւորական, այլ և՝ նիւթական ։ Այսպէս՝ 'ի վերոգրելոց բաղդատեալ նախադասութեց աստ եզրակացուցանի, թէ յոռեգոյն է և թշուառութիւն անհնարին կուրութիւն աչաց մտաց, քան կուրութիւն աչաց մարմնոյ ։

Դ․ յանդունդս խորոց յետին կուրութե մտաց ընկղմեալ տեսանեն ազգք մինչև իսպառ, որք ոչ ծանեան [illegible] արժանեաց զկարգ դպրութե․ և զուսումն բազմաձայն լեզուաց իբրև ումպէտս համարեալ՝ ենթադրեցան կամովին եղկելի ձայնին, վայ որոց թողեալ իցէ զուսումն 'ի մանկութե․ և ներհակ սմին, յազգաց անտի, յորս ծաղկեալ թագաւորէ տիրապէս լուսաւորութիւն մտաց, ելին և հանդիսացան ի դարս դարս արք ականաւորք և մակացուք․ և բարձր արարեալ զանուն համազգեաց իւրեանց մինչև յայժ, եղեն [illegible] ոչ միայն անձին առանձին, այլ և ընկերին և հայրենեաց [illegible] ։

Ի՝ նախանձ բարի վառեալ Նորին Երանեալ Սրբազնակատար Կաթողիկոսն ամ. Հայոց և ծայրագոյն Պատրիարքն առաքելական եկեղեցւոյ Ք՟ի, աշխատասէրն ը՟ստ օրինակի հովուին հսկողի՝ լուսաւորութեան հոգւոց մերոց, անձանձիր եղեալ տքնէր զցայգ և զցերեկ 'ի վ՟ր բանաւոր հօտին Ք՟ի առ 'ի հաւասար առնել զն՟ս լուսաւորեալ ազգաց Եւրոպացւոց 'ի լուսաւորութեն ը՟ստ մասին. որում զարդիս ես նկատեալ, յետ հասու լինելոյ նորագոյն սրբոյ անուանեալ գրքուկին՝ 'ի լոյս ընծայելոյ յինէն յԱստրախան 'ի տպարանի ս՟բյ և մեծի Աթոռոյն Էջմիածնի յամի Տ՟ն 1820. թէ չէ՛ է երևեալ ցայժմ յազգի մերում քերականութի 'ի լեզու Հայոց և Ռուսաց, հրաման ետ ամենախնամութեամբ յօրինելոյ զայն թարգմանաբար յօգուտ և 'ի զբօսանս ուսումնասէր աշակերտաց դպրոցաց մերոց, ը՟ստ և ահա օրհնութ՟ բարձրելոյն և շնորհիւ մօրս լուսոյ ս՟բյ և մեծի Աթոռոյս յաջողեցաւ իսկ յօրինել, և տպագրութ՟ 'ի լոյս ընծայել այնպէս, որչափ կարողանն, զոր յանձնեմ միոց իմոց խոնարհ սրտիւ նուիրեմ զգօնամիտ մանկանցդ հայկազնեայց. և մաղթեմ ընդունել սիրով զայս երախայրի երկասիրութեա 'ի հաճոյս. յոր եթէ վրիպակ ինչ նշմարեսցի 'ի լուսաւոր մտաց ձերոց յակամայ կամաց է մէջ սպրդեալ, մի՛ ինչ ստգտանել դատողաբար. այլ՝ մանաւանդ անքասիր առնել հաճեսջիք. զի պտուղ հասունակ, ոչ յաւուրս գարնան, այլ՝ յեղանակի ամառան և կամ յաշնան խնդրի 'ի ծառոց. ողջ լերուք. որ եմ և մնամ

Ամենախոնարհ ձերոյ աղօթարարակից
ծառայ Աբրահամ առաջնորդ Սարգսեան
Արծրունեան Աստուածատուրեան յետին
պաշտօնեայ Նորին Երանեալ սրբազնա-
կատար Աշտարակեցի.

Ի՝ 1822. 'ի յունվարի 1.
յամրոցս Շուշի.

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՌՈՒՍԱՑ ԼԵԶՈՒԻ

Քերականութիւն (որ առ ռուսս Грамматика գրամմատիկա լսի,) է արուեստ՝ որ ուսուցանէ ուղիղ խօսել և անսխալ շարադրել։

Քերականութիւն ունի չորս մասունս։

Ստուգաբանութիւն. ըստ յունաց՝ Этимологія և ըստ ռուսաց՝ Словопроизведеніе։

Յարմարագրութիւն. ըստ յունաց՝ Орѳографія և ըստ ռուսաց՝ Правописаніе։

Շարադրութիւն, և կամ համաձայնութիւն. ըստ յունաց՝ Синтаксисъ և ըստ ռուսաց՝ Словосочиненіе։

Առոգանութիւն. ըստ յունաց՝ Просодія և ըստ ռուսաց՝ Слогоудареніе։

Յաղագս յարմարագրութեան։

Յարմարագրութիւն է մասն քերականութեան՝ որ ուսուցանէ գիտել

ա. Զձևս, զբաժանմունս, և զարտասանութիւնս տառից ռուսաց։

բ. Զկանոնաւոր շարամանութիւնս բառից և բանից։

գ. Զօրինաւոր գործածութիւն կէտից և նշանաց. զորս լրագոյն կարես տեսանել 'ի վերջ համաձայնութեան։

Յաղագս տառից առ հասարակ, և յաղագս նոցին բաժանմանց։

Հասարակ գործածութեամբ զհետ երթալով տառք հաշուին երեսուն և հինգ 'ի ռուսաց լեզուի, որոց ձևք և անուանք տեսանին 'ի յետագայդ։

Մեծ չափաւոր գիր։	Փոքր գիր։	Նօտր գիր։		Հնչումն ըստ ռուսաց։	Հնչումն ըստ հայոց։	Յարգ։
А.	а.	*А.*	*а.*	Азъ.	ազ.	а, ա.
Б.	б.	*Б.*	*б.*	Буки.	բուկի.	б, բ.
В.	в.	*В.*	*в.*	Вѣди.	վէդի.	в, վ. բ.
Г.	г.	*Г.*	*г.*	Глаголь.	ղլաղօլ.	г, ղ. գ. հ.
Д.	д.	*Д.*	*д.*	Добро.	դօբրօ.	д, դ.
Е.	е.	*Е.*	*е.*	Есть.	եստ.	е, ե.
Ж.	ж.	*Ж.*	*ж.*	Живете.	ժիվետե.	ж, ժ.
З.	з.	*З.*	*з.*	Земля.	զեմլեա.	з, զ.
И.	и.	*И.*	*и.*	Иже.	իժե.	и, ի.
І.	і.	*І.*	*і.*	І.	ի.	і, ի.
К.	к.	*К.*	*к.*	Како.	կակօ.	к, կ. ղ. ք.
Л.	л.	*Л.*	*л.*	Люди.	լիւդի.	л, լ.
М.	м.	*М.*	*м.*	Мыслете.	միսլետե.	м, մ.
Н.	н.	*Н.*	*н.*	Нашъ.	նաշ.	н, ն.
О.	о.	*О.*	*о.*	Онъ.	օն.	о, օ. ո.
П.	п.	*П.*	*п.*	Покой.	պօկօյ.	п, պ. փ.
Р.	р.	*Р.*	*р.*	Рцы.	րցի, ռցի.	р, ր. ռ.
С.	с.	*С.*	*с.*	Слово.	սլօվօ.	с, ս.
Т.	т.	*Т.*	*т.*	Твердо.	տվերդօ.	т, տ. թ.
У.	у.	*У.*	*у.*	У.	ու.	у, ու. ւ.
Ф.	ф.	*Ф.*	*ф.*	Фертъ.	ֆերտ.	ф, ֆ. փ.
Х.	х.	*Х.*	*х.*	Херъ.	խեր.	х, խ. հ.
Ц.	ц.	*Ц.*	*ц.*	Цы.	ցի.	ц, ց. ծ. ձ.
Ч.	ч.	*Ч.*	*ч.*	Червь.	չերվ.	ч, չ. ճ. ջ.
Ш.	ш.	*Ш.*	*ш.*	Ша.	շա.	ш, շ.
Щ.	щ.	*Щ.*	*щ.*	Ща.	շչա.	щ, շչ.
Ъ.	ъ.	*Ъ.*	*ъ.*	Еръ.	եր, եռ.	ъ } ոչ գոն ՚ի մեզ։
Ы.	ы.	*Ы.*	*ы.*	Еры.	երի, եռի.	ы } ոչ գոն ՚ի մեզ։
Ь.	ь.	*Ь.*	*ь.*	Ерь.	եր.	ь } ոչ գոն ՚ի մեզ։
Ѣ.	ѣ.	*Ѣ.*	*ѣ.*	Ять.	եատ.	ѣ, ե. ը.
Э.	э.	*Э.*	*э.*	Э.	է.	э, է.
Ю.	ю.	*Ю.*	*ю.*	Ю.	իւ.	ю } ոչ գոն ՚ի մեզ.
Я.	я.	*Я.*	*я.*	Я.	եա.	я } ոչ գոն ՚ի մեզ.
Ѳ.	ѳ.	*Ѳ.*	*ѳ.*	Ѳита.	ֆիտայ.	ѳ, ֆ.
Ѵ.	ѵ.	*Ѵ.*	*ѵ.*	Ѵжица.	իժիցայ.	ѵ, ի։

Տառք ռուսաց լեզուի բաժանին ՚ի ձայնաւորս, гласныя կամ само-гласныя, յերկբարբառս կամ յերկձայնս, двугласныя, յանձայնս, без-гласныя, և ՚ի բաղաձայնս, согласныя։

Ձայնաւոր յայն սակս կոչին տառք, զի առանց յօդելոյ այլոց տա-ռից կարեն արտաբերիլ կամ տալ հնչումն. որպիսիք են սոքին. a, ա. e, ե. i, ի. o, օ. y, ու կամ լոկ ւ. э, է. v, ի։

Երկբարբառ կամ երկձայն տառք են այնք, որք բաղկանան յերկուց ձայնաւոր տառից. բայց մին միայն հնչէ զձայն. այսպիսի են հետա-գայքս. и, ы, ѣ, ю, я, ай, ей, ій, ой, уй, ый, ѣй, эй, юй, яй։

Ծանօթութիւն. Զի տառս и, ցուցանէ, թէ բաղկացեալ իցէ յեր-կուց i տառից ՚ի միասին զօդելոց։

Տառս ы, բաղկանայ ՚ի տառիցս ъ և i։ Տառս ѣ, ՚ի տառիցս i և e:
Տառս ю ՚ի տառիցս i և y։ Տառս я, ՚ի տառիցս i և a։

Տառքս ъ և ь կոչին անձայն և են լոկ նշանագիրք. որք ցուցանեն զթաւ կամ զնուրբ հնչումն այնր բաղաձայնի, զկնի որոյ դնին։

Տառք յորջորջին բաղաձայն յայն սակս, զի ինքնին ոչ կարեն արտա-սանիլ. այլ արտաբերին յօդելով ընդ ձայնաւորս. որք և հաշուին քսան և մի. б, в, г, д, ж, з, к, л, м, н, п, р, с, т, ф, х, ц, ч, ш, щ, ѳ։

Բաղաձայն տառքս՝ г, д, ж, к, л, х, ц, ч, ш, щ, կոչին փոփոխականք, կամ լծորդք. զի որում ՚ի բղխմունս և ՚ի լծորդութիւնս բայից փոխադրին յայլ տառս. որպ. Богъ, Աստուած. Божій, Աստուածային. бѣгу, бѣжишь, փախչիմ. сижу, сидишь, նստիմ, բազմիմ. пеку, печешь. եփեմ, թխեմ. тукъ, պարարտ կամ պարարտութիւն, тучный, պարարտ կամ գէր. верчу, вер-тишь, պտուտեմ կամ պտուտկեմ։

Յաղագս հնչման տառից։

Ձայնաւոր տառքս՝ a, e, o, y, ы, э. ունին զհնչումն թաւ. որպ. слава, փառք. покой, հանգիստ, ևս՝ բնակարան փոքրիկ (՚ի տան։) будущій,

ապառնի, կամ հանդերձեալ. быстрый, սրընթաց. эхо, (է անուն յունական. որ 'ի ռուսս լսի отголосокъ. և 'ի հայումս, արձագանգ։) экономъ, տնտես, կոնոմոս, վերակացու տան։ Ներհակ սմին՝ տառքդ՝ е, и, і, ѣ, ю, я, ներկայամամբ ձայնաւորացս այսոցիկ՝ արտասանին առաւելագոյն նուրբ կամ սուր. որ. ель, սարոյ կամ թեղօշ, սոճի. емлю, ընդունիմ. синій, կապոյտ, կապուտակ. ѣздокъ, Ճանապարհորդ, անցաւոր. юность, մանկութիւն. яма, խորխորատ, գուբ։ Բայց յորժամ դնիցին ըստ կնի տառիցս ж, ч, ш, щ, յայնժամ յէնչ էնչ բառս՝ ընդունին և ինքեանք զհնչումն թաւ։ որ. жертва, պատարագ կամ զոհ. чинъ, կարգ, աստիճան. щитъ, վահան, ասպար. եւն։

Տառս е, 'ի հասարակ լեզուի 'ի կիր ածեալ՝ բաց 'ի սեպհական արտասանութենէ իւրմէ՝ եթէ ունիցի 'ի վերայ իւր զշեշտ, 'ի բառս ինչ, զկնի տառիցդ՝ ж, ч, ш, щ, արտասանի իբրև զտառս о. որ. բառքս՝ желтыя, դեղին. черный, սեաւ. счетъ, թիւ, համար. шелкъ, ապրշում, մետաքս. щелокъ, մոխրաջուր, արտաբերին իբր жолтый, чорный, счотъ, шолкъ, щолокъ։ Նոյն երբեմն 'ի սկիզբն ինչ ինչ բառից՝ և զկնի տառիցդ՝ б, в, г, д, з, л, м, н, п, р, с, т, արտասանին իբրև іо, որ փոխանակ արտասանելոյ ежъ, ոզնի. медъ, մեղր. ленъ, վուշ. семга, (ազգ ինչ ձկան,) արտաբերին իբր іожъ, міодъ, ліонъ сіомга։ եւն։

Ծանօթութիւն։ Բայց բազում բառք խոտորին 'ի կանոնէս՝ ոչ հայեցեալ յայն՝ թէ գուցէ 'ի վերայ տառիս е, շեշտ՝ յորս անփոփոխ արտասանութիւն յանգի. որ. вещь, իր. сердце, սիրտ. дерево, ծառ. щедрый, առատաձեռն, առատաբաշխ, առատ. олень և елень, եղջերու, (մարալ։)։

Տառս и, արտաբերի սուղ՝ երբ ունիցի 'ի վերայ իւր զողանշան. որ. тайна, խորհուրդ, գաղտնիք, ծածուկ. мудрый, իմաստուն, զգօն։ եւն։

Տառս о, եթէ ոչ ունիցի 'ի վե՛ր զշեշտ, 'ի բազում բառս՝ 'ի հասարակ խօսս արտասանի իբրև а, առ 'ի մեղմել զխոշորութիւն արտաբերութեան. օր. փոխանակ Москва, Մոսկով. хорошо, բարւոք. хочу, կամիմ. которой, որ. արտասանի իբր Масква, харашо, хачу, каторой:

Տառս v, 'ի յունական բառս 'ի կիր ածեալ 'ի գիրս սլաւենաց, արտաբերի որպէս и, օր. vпостась, անձն. θvміамъ, (է բառ յունական՝ որ առ ռուսս լինի ладонъ, և առ մեզ խունկ:) բայց՝ մերթ և իբրև в, օր. evангелie, աւետարան. evхаристія, հաղորդութիւն: ևն:

Տառքս՝ б, в, д, ж, з, 'ի հասարակ լեզուի 'ի կիր ածեալք յառաջոյ տառիցս՝ к, п, с, ф, х, ц, ч, ш, щ, ևս և 'ի վերջ բառից զառաջեաւ տառիցս ъ և ь, արտասանին այսպէս, տառս б, իբրև п. տառս в, իբրև ф. տառս д, իբրև т. տառս ж, իբրև ш. տառս з, իբրև с. օր. բառքս робкій, երկչոտ, վատասիրտ. дубъ, կաղնի. левъ, առիւծ. идти, գնալ, երթալ. пряжка, Ճարմանդ. сказка, առակ, և՝ առասպել. разъ, մի, և՝ անգամ. արտաբերին ропкій, дупъ, лефъ, итти, пряшка, скаска, расъ. ևն:

Տառս г, պէսպէս օրինակաւ արտասանի:

ա: Յամենայն այլազգական բառս՝ առեալս 'ի լեզու ռուսաց. որք սկսանին տառիւս г, կամ փակեն յինքեանս զայն, արտասանի այնպէս, որպէս և գրի 'ի նմին լեզուի. որ իբրև գէ g կամ ղէ լատինաց h. և մերթ գ կամ ղ. օր. гарнизонъ, պահակ, պահականոց. բառ գաղղիական (է մասն ինչ զօրաց՝ որք գտանին յամրոցի առ 'ի պաշտպանութիւն նորին 'ի թշնամեաց.) грамматика, քերականութիւն. географія, աշխարհագրութիւն. герой, քաջամարտիկ, շահատակ կամ դիւցազուն ախոյեան Гишпанія, Սպանիա: ևն:

բ. 'Ի վերջոյ բառից յառաջոյ տառիս՝ ъ, տայ զձայն իբրև к. օր.

գէթ снѣгъ, ձիւն. другъ, բարեկամ. недосугъ, անձեռնհաս. ևն. արտաբերի իբր снѣкъ, другъ, недосукъ։

Է. Ի վերջոյ բառից Богъ, Ա.Ծ. убогъ, աղքատ, չքաւոր. և յետ այլազգական բառս. նոյնպէս և առաջի տառից к, п, с, ф, х, ц, ч, ш, щ. արտասանի որպ х. որ. Петербургъ, Պետրուպօլիս, Պետրբուրգ. мягкій, կակուղ. легкій, թեթև. ևն. արտաբերին Бохъ, убохъ, Петербурхъ, мяхкій, лехкій։

Ը. Յանուանս, յանգեալս յեզակի սեռականն ’ի го, արտասանի ’ի հասարակ խօսս իբր ’ի բազում в. որ. сево, роднова, больнова. ևն։

Տառս с, առաջի տառից в, г, д, ж, և յայլազգական բառս ևս առաջի տառից м, р, տայ զհնչումն որպ з. որ. բառքս сдѣланный, արարեալ. сжимать, ճմլել, ճնշել, քամել. исраиль, իսրայէլ. արտասանին здѣланный, зжимать, израиль։ ևն։

Տառս ч, ’ի բազում բառս արտաբերի որպ ш. որգոն. нарочно, խորհրդով, դիտմամբ. скучно, նեղութիւն, ձանձրութիւն. что, զինչ, իմն, ինչ, թէ, զի, որ. արտասանին нарошно, скушно, што։

Յաղագս վանկից և բառից։

Ի յիշատակեալ տառից բաղկանան վանկք, որ լինին կամ լոկ ձայնաւոր տառ ինչ. որ. я, а, и; կամ երկբարբառ. որ. эй, այ, ոյ, ույ գոն, կամ ձայնաւոր բաղադրեալ է միում կամ է բազում բաղաձայնից միանգամայն արտաբերելոց. որգոն. ко, ’ի, յ, առ, ց. по, ըստ, ’ի, յ, առ, մինչև, զհետ, յետ, զկնի, վն, ’ի մասին։

Ի վանկից բաղկանան բառք, որք լինին կամ միավանկ. я, ես. страхъ, երկիւղ. трудъ, ջանք, վաստակ. կամ երկվանկ. милость, ողորմութիւն. старость, ծերութիւն. կամ եռավանկ. бла-жен-ство, երջանկութիւն, երանութիւն. у-че-ность, ուսումնականութիւն, հմտութիւն. և կամ քառավանկ և բազմավանկ. у-че-ні-е, ուսումն, դպրութիւն. ми-ло-сты-ня,

ողորմութիւն, տուրք · пре-вос-хо-ди-тель-ство, գերազանցութիւն · вы-со-ко-пре-о-свя-щен-нѣй-шій, բարձր սրբազնագոյն ։ Եզ ։

'Ի վանկս, յարմարագրութիւն պահի 'ի տրոհելն և յանցուցանելն ըղ բառ ինչ 'ի միոջէ տողէ 'ի միւսն · զորմէ արժան է գիտել, զի

Ժէ ։ Օ միավանկ բառս ոչ է արժան անջատել, և անցուցանել 'ի միոջէ տողէ 'ի միւսն ։

Ժը ։ Նոյն բաղաձայն տառք վերաբերին առ նախընթաց ձայնաւորս, յորոց սկսանի ո և իցէ բառ ըստ ռուսաց Ը կարգի բաղաձայնից · որգոն · по-слѣ, զկնի յետոյ · свѣ-тлый, լուսաւոր · քանզի 'ի բաղաձայն տառիցս сл, սկսանի բառդ слѣдъ, հետք · իսկ 'ի тл տառիցդ սկսանի тлѣніе, ապականութիւն · Եզ · Ը Հակառակն սմին՝ մին յերկուց՝ այլ և այլ կից միատեսակ տառից վերաբերի առ նախընթացն, և միւսն առ յաջորդ ձայնաւոր տառն · որպ · скобка, խիղք, ձանկ, պայտ · губка, սպունգ, սաթնուկ · скалка, դլանակ · авва, աբբայ, հայր · истина, ճշմարտութիւն · յածանցեալ բառի՝ եթէ յաւելուած տառք բաղաձայնք ոչ իցեն, 'ի նախատպին այնպիսիքն վերաբերին առ հետևորդ ձայնաւորսն · որպ · при-твор-ство, փաղաքշանք, մարդելուզութիւն · раз-лич-ный, այլ և այլ, պէսպէս, զանազան · ուր ство և ный, են յաւելուածք, որք ոչ գոն 'ի նախատիպ բառսն ։

Յաղագս կիրառութեան երկաթագրաց ։

Նշանագիրք Բ ձևոց լինելանց բաժանին յերկաթագիրս կամ 'ի գլխագիրս · 'ի բոլոր գիրս կամ 'ի նոտր գիրս · երկաթագիրք կամ գլխագիրք դնին ։

Ժթ ։ 'Ի սկիզբն իւրաքանչիւր բանի պարբերութեան և տան կամ 'ի սկիզբն իւրաքանչիւր տողից · որպ · Славнѣйщую побѣду получаетъ, кто побѣждаетъ себя · զփառաւորագոյն ընդունի զյաղթանակ՝ որ յաղթէ

անձին ։ Добродѣтель есть сама себѣ награда. առաքինութիւն է ինք-եան է վարձ ։

ե ։ Յոտանաւորս՝ ՚ի սկիզբն իւրաքանչիւր տողի. օր․

Науки юношей питаютъ,
Отраду старымъ подаютъ;
Въ счастливой жизни украшаютъ,
Въ несчастной случай берегутъ.
Ուսմանցուէք՝ զերիտասարդս՝ սընուցանեն,
Ըզ բերկրութիւն՝ ծերագունից՝ մատուցանեն·
Յերջանկութեան՝ զկեանս զարդու՝ գեղազարդեն,
՚Ի չար վշտաց՝ ձախորդութեան՝ պատսպարեն ։

զ ։ ՚Ի սկիզբն յատուկ անուանց Այ, հրեշտակաց, արանց, կանանց, տէրութեանց, իշխանութեանց, քաղաքաց, ծովուց, գետոց և այլոց․ որգոն․ Саваоѳъ, Սաբաւովթ․ Спаситель, փրկիչ․ Творецъ, արարիչ․ Мессія, Մեսիայ․ Андрей, անդրէաս․ Екатерина, կատարինէ․ Россія, Ռուսիա կամ ռուսաստան․ Москва, Մոսկով․ Римъ, Հռովմ․ Фисонъ, Փիսովն․ Геонъ, Գեհովն․ Тигръ, Տիգրիս․ Эѵфратъ, Եփրատէս կամ եփրատ ։

է ։ ՚Ի սկիզբն անուանց վեհանձանց և նոցին պատուանուանց․ օր․ Императоръ․ Կայսր, կեսար․ Монархъ, ինքնակալ, միապետ, Царь, Государь, Թագաւոր. Князь, իշխան․ Графъ, կոմս․ Митрополитъ, մետրապոլիտ, արքեպիսկոպոս մայրաքաղաքի, մայրաքաղաքացի․ Епископъ, եպիսկոպոս, վերատեսուչ․ Генералъ, զօրագլուխ, զօրավար ։

ը ։ ՚Ի սկիզբն բառից՝ որք կերպաւորեն զպատուանուն․ որպիսի և իցէ աստիճանի կամ արժանապատուութեան․ օր․ Ваше Сіятельство, պայծառափայլութիւն ձեր․ Ваше Благородіе, ազնուութիւն ձեր ։ Եւն.

թ ։ ՚Ի սկիզբն անուանց կառավարութեանց՝ և որոց նշանակեն զդա-

տաստանական տեղին · որ · Сенатъ, սինկլիտոս. Сѵнодъ, սինհոդոս · կամ ժողով · Коллегія, ժողով, երաւարան, դիւան. Академія, ակադեմիա, Ճեմարան. Университетъ, համալսարան · Магистратъ, ատեան, ատենակալք, դատաւորք ։

է ։ Ի սկիզբն անուանց մակացութեց և երևելի արուեստից · որ ։ астраномія, (է անուն յունական. 'ի ռուսաց ասացեալ звѣздословіе; և 'ի մէնջ աստեղաբանութիւն, աստեղաբաշխութիւն ։) астрологія, աստղագիտութիւն, քաղդէութիւն. философія · իմաստասիրութիւն, փիլիսոփայութիւն · химія, քիմիա, կամ ալքիմիա · словесность, գրականութիւն, գրագիտութիւն, և՝ քաջաբանութիւն · краснорѣчіе, քաջախօսութիւն, Ճարտասանութիւն ։ եւն ։

ը ։ Գրին մեծ տառիւք որ գլխագրօք նաև պատուանուն կայսերն՝ որ Թագաւորէ 'ի վ՛ր հայրենեաց · և նորին մեծափառ ազգատոհմից · որպ և տեղիք անուանց վեհանձանց ։ օրգ՛ն ։ ВАШЕ ИМПЕРАТОРСКОЕ ВЕЛИЧЕСТВО, Կայսերական մեծափառութիւն ձեր ։ Мы признали, մեք ծանեաք ։ եւն ։

Յաղագս մասանց բանի ։

Ամ՛ բառք, որ գտանին 'ի լեզուի ռուսաց, բաժանին առ հասարակ յութն ազգս · որք կոչին մասունք բանի, և են սոքին ։

Անուն, имя, իմեա.
Դերանուն, мѣстоименіе, մեստոիմենիե.
Բայ, глаголъ, գլագոլ.
Ընդունելութիւն, причастіе, պրիչաստիե.
Մակբայ, нарѣчіе, նարեչիե.
Նախադրութիւն, предлогъ, պրեդլոգ.
Շաղկապ, союзъ, սոյուզ.
Միջարկութիւն, междометіе, մեժդոմետիէ ։

Բառք լինին նախատիպք՝ կամ ածանցականք · պարզք՝ կամ բարդք · նուազականք՝ կամ առաւելականք · փոփոխականք՝ կամ անփոփոխք ։

Նախատիպ՝ կամ նախագաղափար (первообразное պերվօօբրազնօե

կամ коренное կօրեննօե․) է այն, որ յայլմէ բառէ ոչ ածանցի․ օր․ рука, ձեռն․ гора, լեառն․ часъ, ժամ, պահ․ день, օր, տիւ․

Ածանցական (производное պրօիզվօդնօե․) է այն, որ ՚ի նախատիպ բառէ ածեալ է յայլ ևս կերպ նշանակութ․ օր․ ՚ի բառէս гора, ածանցեալ է բառս горница, տանիք, փոքրիկ բնակարան, վերնատուն․ ՚ի բառէս день, ածանցեալ է բառս денный, օրական․ ՚ի բառէս часъ, ածանցեալ են բառքդ часовой, գիշերապահ, պահակ (զօրական․) часовщикъ, ժամակազմ, ժամաձոյլ․ часовня, մատուռն։

Պարզն (простое պրօստօե․) է այն, որ ոչ է բաղկացեալ ՚ի բազում բառից․ օր․ честь, պատիւ, շուք․ слава, փառք։

Բարդն (сложное սլօժնօե․) է այն, որ բաղկացեալ է յերկուց կամ ՚ի բազում պարզ բառից․ օր․ честолюбіе, պատուասիրութ․ безславіе, անշքութ․ книгопродавецъ, գրավաճառ։

Նուազական (уменьшительное ումենշիտելնօե․) է, որ նշանակէ կամ զիրս նուազագոյն քան զսովորականն․ որգոն․ домикъ, տնակ, (փոքրիկ տուն․) столикъ, փոքրիկ սեղան կամ ճաշարան․ книжка, գրքոյկ։ Կամ զպակասութ յորպիսութ իրին․ որգոն․ бѣловатъ, պխակ կամ որ հակամէտ ՚ի սպիտակ․ կամ սակաւ սպիտակ․ сыроватъ, սակաւ գիճին։

Յաւելական կամ յաճախական (увеличительное ուվելիչիտելնօե․) է այն, որ զ, առաջի առնէ զիրս մեծագոյն կամ առաւելագոյն քան զսովորականն․ կամ, զառաւելութ միոյ իրի քան զմիւսոյն յորպիսութ կամ յէութ․ որգոն․ столище, սեղան մեծ․ домище, տուն մեծ․ головище, գլուխ մեծ․ бѣлехонекъ, սպիտակ յոյժ․ чернехонекъ, սեւ յոյժ․ говорливый, շատախօս կամ յաճախաբան։

Փոփոխական (*) (измѣняемое իզմենեաեմօե․) է, որում հնար է փոփոխիլ պէսպէս օրինակաւ ՚ի վերջաւորութ իւրում․ օր․ рука,

---

(*) Առէ փոփոխելին լինին մասունք բանի, որք կամ հոլովին և կամ խոնարհին։

рук-и, рук-ѣ, руку. ձեռն, ձեռին, ձեռին, զձեռն եւն. иду, ид-ешь, ид-емъ. երթամ, երթաս, երթամք. եւն:

Անփոփոխ (*) (неизмѣняемое անփոփոխական.) է, որ ոչ երբեք կարէ փոփոխիլ 'ի վերջաւորութեան իւրում. որպէս. нынѣ, այսօր, այժմ. когда, յորժամ, երբ. ежели, եթէ:

Յաղագս անուան 'ի հատուածէ:

Անուն (имя,) է մասն բանի, որ ցուցանէ:

ա: Զդէմս (**) կամ զիր (***) և ճանաչի հարցմամբ кто? ով, ո. что? զինչ. որգոն. человѣкъ, մարդ, այր. воинъ, զօրական, զինուոր. городъ, քաղաք. домъ, տուն:

Ծանօթութիւն: Հարցումն кто? ով, ո, յարի 'ի դէմս, որպէս 'ի կենդանի արարածս: Իսկ հարցումն что? զինչ, յարի յիրս անկենդանս, և նոյնպէս 'ի կիր ածի, յորժամ ասի զկենդանեաց անբանից:

բ: Զորպիսութիւն դիմի կամ իրի. որպէս. добрый, բարի. храбрый, քաջ, արի. плодоносный, պտղաբեր. избранный, ընտիր:

գ: Զքանակութիւն կամ զթիւս իրաց. որգոն. два, երկու. три, երեք. десять, տասն. сто, հարիւր. тысяча, հազար. եւն:

Անուն լինի կամ գոյական կամ ածական, և կամ թուական:

Գոյականն (существительное.) նշանակէ զդէմս կամ զիրս, և ճա-

(*) Այն այլ չորք մասունք բանին, որք ո՛չ անկանին ընդ հոլովմամբ կամ ընդ լծորդութեամբ լինին:

(**) Առ բառս դէմ, նշանակէ զկենդանիս կամ զանձս մարդկան:

(***) Ի ներքոյ կոչման իրք և հոս այն առարկայք, որք ոչ անկանին ընդ զգայութեամբ. այլ մի միայն է մտաւն 'ի միտս մեր. որպէս. человѣколюбіе, մարդասիրութիւն. мудрость, իմաստութիւն. красота, գեղեցկութիւն:

նաչի հարցմամբս кто? ո՛վ, ո՛, կամ что? զի՛նչ. որպէս են բառքս, человѣкъ, մարդ. звѣрь, գազան. перо, գրիչ. надежда, յոյս. память, յիշողութիւն, ուշ, յիշատակ։

Ածական (прилагательное.) նշանակէ զորպիսութիւն դիմի կամ իրի, և ճանաչի հարցմամբս какой? որպիսի. որգոն. человѣкъ богатый, добродѣтельный, այր մեծատուն, առաքինի. книга полезная, գիրք օգտակար. память острая, յիշողութիւն սուր. եւն։

Թուական անուն (числительное имя.) է այն, որ նշանակէ ըզ թիւս դիմաց կամ իրաց, և ճանաչի հարցմամբս сколько? քանի՞ և կամ коликій? որքան, որչափ. որպ. два, երկու. три, երեք. четыре, չորք կամ չորս. тысяча, հազար. первый, նախկին, առաջին, առաջներորդ. второй, երկրորդ. եւն։

Յաղագս գոյական անուան։

Գոյական անուանք ունին զեօթն վերջաւորութիւնս. а, е, й, о, ъ, ь, я. որպ. книга, գիրք. солнце, արեգակն. рай, դրախտ. облако, ամպ. городъ, քաղաք. день, օր, տիւ. земля, երկիր, հող, գետին, և բաժանին ՚ի յատուկ, ՚ի հաւաքական, և յընդհանուր։

Յատուկն (собственное սօբստվեննօե.) է այն, որ պատշաճի միում դիմի կամ միում իրի. որգոն. Демосөенъ, Դեմոսթենէս. Цицеронъ, Կիկերոն. Грецiя, Յունաստան, Ելլադա. Римъ, Հռովմ. Ахиллесъ, Աքիլլէս։

Հաւաքական (собирательное սօբիրատելնօե.) է այն, որ եզական թուով նշանակէ զբազմութիւն առարկայից միոյ սեռի. որգոն. соборъ, ժողով, աւագ եկեղեցի. стадо, հօտ, փարախ. войско, զօրք. песокъ, աւազ. общество, ընկերութիւն, հասարակութիւն։

Ընդհանուրն՝ կամ հասարակն (общее օբշչեե կամ нарицательное նարիցատելնօե.) է այն, որ վերաբերի առ բազում դէմս կամ առ բա-

զուամ երս մի և նոյն սեռի. որգոն. ангелъ, հրեշտակ, ևս՝ տօն անուանակոչումէ. человѣкъ, մարդ. птица, թռչուն. звѣрь, գազան. писатель, շարագիր, մատենագիր.

Յաղագս պարագայից անուան.

Յանուանս ՚ի հասարակի արժան է մտածել զսեռ, զթիւ, զհոլովս, և զհոլովումն։

Սեռն (родъ րօդ.) է որոշումն և պէսպիսումն սեռից։

Սեռք գոյական անուանց՝ են չորք. արական, իգական, չէզոքական և հասարակ. սեռքս այսոքիկ դիւրաւ ճանաչին ՚ի ձեռն բառիցս сей, сія, сіе, այս, այն. այ՟ որում ցուցանին ՚ի հետագայդ։

Գոյական անուանց արական սեռքն են (мужескаго рода մուժեսկագօ րօդա.) առաջի որոց մարթ է դնել զբառս сей, այս, այն. օր. сей домъ, городъ, այս տուն, քաղաք։

Իգական սեռքն են (женскаго рода ժենսկագօ րօդա.) առաջի որոց հնար է դնել զբառս сія, այս, այն. օր. сія улица, дорога, այս փողոց, ճանապարհ։

Չէզոքական սեռք են (средняго рода սրեդնեագօ րօդա.) առաջի որոց հնար է դնել զբառս сіе, այս, այն. օր. сіе зданіе, мѣсто, այս շինուած, տեղի։

Հասարակ (общаго рода օբշչագօ րօդա.) այ՟ արական և իգական սեռն գոյական անուանց է այն, առաջի որոց մարթ է դնել сей և сія, այս, այն. օր. сей և сія порука, сирота. այս երաշխաւոր, որբ։

Գիտելի է, զի սեռք անուանց ոչ նկատին ՚ի ռուսս այ՟ զօրութեն նշանակութեն նոցին, որպէս ՚ի մեզ, այլ՝ այ՟ վերջաւորութեն՝ կամ այ՟ յօդից ինչ, որպէս ՚ի լատինս, եթէ զի եթէ անուն ինչ ունիցի յառաջոյ իւր զդերանունս сей, այս, այն. և կամ ՚ի վերջոյ զտառսդ й և ъ. մերթ ևս а և ь, առ արական. այ՟ այսմ ևս եթէ անուն ինչ ունիցի յառաջոյ իւր զդերանունս сія կամ ՚ի վերջոյ զտառսդ а, ь, և я, առ

իգական • բաց յարական և յայլ անուանց ինչ ։ Բայց եթէ առաջի անուան իրիք դնիցի բառդ сіе, և կամ 'ի վերջոյ տառքդ е և о համարի չեզոքական, հուսկ ապա եթէ անուն ինչ ունիցի առաջի իւր զդերանունդ сей, և сія, այն, ասի հասարակ ։

Յաղագս Թուոց ։

Թիւն (число չիսլօ.) է կրկնակի, եզակի և յոգնակի ։

Եզակին (единственное եդինստվեննօե.) է, որ նշանակէ զմի իր, և կամ զմի առարկայ • прилѣжный ученикъ, փութաջան աշակերտ • полезная книга, օգտակար գիր ։

Յոգնականն (множественное մնօժեստվեննօե •) է, որ նշանակէ զերկու կամ զբազում իրս կամ զառարկայս • օր. • прилѣжные ученики, փութաջան աշակերտք • полезныя книги, օգտակար գիրք ։

Ծանօթութիւն ։ Են անուանք ինչ, որ ըստ եզականին միայն վարին • որպէս են սոքին • золото, ոսկի • серебро, արծաթ • молодость, տղայութիւն, մանկութիւն, և՝ մատաղութիւն • старость, ծերութիւն ։ Եւ են, որք ըստ յոգնականին միայն վարին • որպէս են բառքս • вилы, երկժանի կամ երեքժանի գործի ինչ, ворота и врата, դուռն • гусли, տաւիղ • грабли, սրմուխ ։ Եւլն ։

Յաղագս Հոլովոց ։

Հոլով անուանց (падежъ պադեժ •) է պէսպիսութիւն վերջաւորութեց նոցա, և 'ի լեզուի ռուսաց եօթն ազգք Թուին հոլովոց ։ օր. ։

Ուղղականն (именительный իմենիտելնիյ •) է որ դիմաքաժանի և պատասխանէ հարցմանս кто? կամ что? ո՞վ, կամ զի՞նչ • օր. • (հարց) Кто основалъ Петербургъ? ո՞ եարկ զհիմն Պետրոպօլսոյ • պատաս- խանի) Петръ Великій. Մեծն Պետրոս ։ Что дѣлаетъ человѣка истинно благополучнымъ? զի՞նչ առնէ զմարդն տրապէս երջանիկ • добродѣтель, առաքինութիւն ։

Սեռականն (родительный րօդիտելնիյ •) նշանակէ զվերբերութիւն

միոյ իրի յայլ ինչ էր, և պատասխանէ հարցմանս чей, чья, чье, кого, чего? որո՞յ կամ ո՞յր. օր. Чей совѣтъ полезенъ? ո՞յր խորհուրդ իցէ օգտակար. человѣка умнаго, առն իմաստնոյ։ Чего возвратить не можно? զի՞նչ անհնարին իցէ ՚ի դարձուցանել. прошедшаго времени, զժամանակն անցեալ։

Տրական (дательный դատէլնիյ.) պատասխանէ հարցմանս кому կամ чему? որո՞ւմ, որո՞յ, ո՞ւմ. օր. Кому уготовано въ будущей жизни вѣчное блаженство? ո՞ւմ իցէ պատրաստեալ ՚ի հանդերձեալ կեանս յաւիտենական երանութիւն. праведникамъ, արդարոց։ Чему Александръ Великій учился у Аристотеля? զի՞նչ ուսաւ մեծն Աղեքսանդր յԱրիստոտելէ. Философіи, զիմաստասիրութիւն։

Հայցական (винительный վինիտէլնիյ.) ճանաչի հարցմամբս кого կամ что? զո՞, զո՞վ, զո՞ր, զի՞նչ. օր. Что въ началѣ сотворилъ Богъ? ՚ի սկզբանէ զի՞նչ արար Աստուած. небо и землю, զերկինս և զերկիր։

Կոչական (звательный զվատէլնիյ.) պատասխանէ հարցմանս кто կամ что? ո՞վ կամ ո՞. և ՚ի կիր առնի, յորժամ կոչեմք զոք կամ կարդամք առ ոք. օր. Судьбы твои Боже не испытанны. Աստուած իրաւունք քո անքննելի են։

Գործիական (творительный թվօրիտէլնիյ.) ճանաչի հարցմամբս кѣмъ, чѣмъ? որո՞վ կամ ի՞ւ. օր. Кѣмъ побѣжденъ Дарій? յումմէ՞ պարտեցաւ Դարեհ. Александромъ Великимъ, ՚ի մեծէն Աղեքսանդրէ։ Чѣмъ отличается человѣкъ отъ прочихъ животныхъ? ի՞ւ որոշի մարդն յայլոց կենդանեաց. разумомъ, մտօք.

Ծանի՛ր աստանօր։ զի ՚ի ռուս գործիական հոլովն մինչ լինի խնդիր կրաւորական բայի, գրեթէ միշտ բացառի ՚ի հայումս բացառականաւ։

Ներգոյական (предложный պրէտլօժնիյ.) պատասխանէ հարցմանս

въ комъ, въ чемъ, на комъ, на чемъ, о комъ, о чемъ, при комъ, при чемъ, гдѣ? յում, յով, յորում, կամ յո, կամ ուր. օր. Въ чемъ состоитъ истинное блаженство? յի՞նչ կայանայ ճշմարիտ երջանկութիւն. въ спокойствіи духа, ՚ի հանգստեան հոգւոյ։ О чемъ наиболѣе юношество стараться должно? վասն ո՞յր առաւել քան զառաւել պէտք են ջան դնել երիտասարդաց. о просвѣщеніи своего разума и образованіи сердца, վասն լուսաւորութեան մտաց և բարեգործութեան սրտի իւրոյ։ Գիտելի է, զի ՚ի բարբառս ռուսաց դերանունք кто, պատշաճի մարդկան. իսկ что, զգայնոց և անզգայից։

Արժան համարիմ ծանուցանել և զայս, զի այլ հոլովք՝ որ ՚ի հայումն գտանին, օր. պատմական, բացառական, պարառականն ՚ի ռուսս ձևանան ՚ի ձևոյն նախադրութեանց. որպէս և ՚ի լատինս և յիտալացիս։

Յաղագս հոլովման անուանց գոյականաց։

Գոյական անուանք ունին չորիս հոլովմունս։

Առաջին հոլովումն փակէ յինքեան զանուանս արական, իգական, և հասարակ սեռի, որք եզերին ՚ի а, և я. օր. воевода, սպարապետ, նախարար. книга, գիրք, մատեան. судья, դատաւոր. земля, երկիր, հող, գետին. сирота, որբ. ևն։

Առ երկրորդ հոլովումն վերաբերին անուանք արական սեռի, որք յանգին ՚ի й, ъ, ь. նմանապէս ՚ի е, և о. չէզոքական սեռի. օր. змѣй, կամ змѣя, օձ. адъ, դժոխք. путь, ուղի, ճանապարհ. сердце, սիրտ. дерево, ծառ, և փայտ։

Առ երրորդ հոլովումն վերաբերին անուանք չէզոքական սեռի, որք եզերին ՚ի а, և я. օր. отроча, մանուկ, տղայ. пламя, բոց. знамя, դրօշակ. имя, անուն. время, ժամանակ.

Չորրորդ հոլովումն բաղկանայ յանուանց իգական սեռի, որք եզերին ՚ի ь. օր. добродѣтель, առաքինութիւն. страсть, չարչարանք,

կերպ, կամ մոլուն. тѣнь, ստուեր. Իգ. память, յիշողուն, ուշ, եւ յիշատակ. степень, աստիճան. честь, պատիւ, մեծարանք։

ՕՐԻՆԱԿՔ

Չորից հոլովմանց գոյական անուանց.

Հոլովումն առաջին.

Օրինակք հոլովման անուանց, որք յանգին 'ի *a*.

	Եզակի.	Յոգնակի.
Ուղղ.	Слуг-а, Ծառայ.	Слуг-и, Ծառայք.
Սեռ.	Слуг-и, ծառայի.	Слуг-ъ, ծառայից.
Տրակ.	Слуг-ѣ, ծառայի, 'ի ծառայ.	Слуг-амъ, ծառայից, 'ի ծառայս.
Հայց.	Слуг-у, զծառայ.	Слуг-ъ, զծառայս.
Կոչակ.	Слуг-а, ո՛ ծառայ.	Слуг-и, ո՛ ծառայք.
Գործ.	Слуг-ою, ծառայիւ.	Слуг-ами, ծառայիւք.
Ներգ.	О слуг-ѣ, 'ի ծառայի.	О слуг-ахъ, 'ի ծառայս.

	Եզակի.	Յոգնակի.
Ուղղ.	Вод-а, Ջուր.	Вод-ы, Ջուրք.
Սեռ.	Вод-ы, ջրոյ.	Вод-ъ, ջրոց կամ ջուրց.
Տրակ.	Вод-ѣ, ջրոյ, 'ի ջուր.	Вод-амъ, ջրոց, 'ի ջուրս.
Հայց.	Бод-у, զջուր.	Вод-ы, զջուրս.
Կոչակ.	Вод-а, ո՛ ջուր.	Вод-ы, ո՛ ջուրք.
Գործ.	Вод-ою, ջրով.	Вод-ами, ջուրբք.
Ներգ.	О вод-ѣ, 'ի ջուր.	О вод-ахъ, 'ի ջուրս.

Ըստ առաջին օրինակի հոլովին անուանք կենդանի իրաց՝ որք յանգին 'ի a. իսկ ըստ երկրորդ օրինակի՝ անուանք անկենդան իրաց՝ որք յանգին նմանապէս 'ի a. որպիսի են հետագայքս։

Дѣвица, ы, կոյս, օրիորդ.
Воевода, ы, սպարապետ, նախարար.
Порука, и, երաշխաւոր.
Авва, ы, աբբայ.
Вельможа, и, իշխան, տէր.
Корова, ы, կով.

Староста, ы, տանուտէր, (քաղաքագեղջ) եւ երեսփոխան.)
Царица, ы, Թագուհի.
Отроковица, ы, օրիորդ.
Ханжа, и, կեղծաւոր.

Слава, ы, փառք.
Сила, ы, զօրութիւն, ոյժ, իշխանութիւն.
Хвала, ы, գովեստ.
Рука, и, ձեռն.
Палка, и, մահակ.
Нога, и, ոտն.

Пища, и, կերակուր.
Звѣзда, ы, աստղ.
Похвала, ы, գովութիւն.
Истина, ы, ճշմարտութիւն.
Трава, ы, խոտ, բանջար, դալարի.

Айва, ы, սերկեւիլ.
Клевета, ы, զրպարտութիւն. եւ բամբասանք.
Аптека, и, դեղարան.
Линейка, и, քանոն.
Гробница, ы, մահարձան, կոթող, տապան.

Угроза, ы, սպառնալիք.
Лира, ы, քնար,
Житница, ы, շտեմարան, համբարանոց.
Алфа, ы, ալֆայ՝ կամ ալփայ.
Анаѳема, ы, անաթեմա, նզովք.

Յոգն. ուղղ.

Стужа, жи, жи, ցուրտ.
Строка, ки, хи, տող.
Уха, хи, хи, ձկնաթան.

Յոգն. ուղղ.

Свѣча, чи, чи, մոմ, ճրագ.
Душа, ши, ши, հոգի, անձն.

Յոգնակի սեռականն յաջորդ անուանցս յանգին 'ի окъ.

Бабка և бабушка, баб-окъ, հանի. եւ՝ մանկաբարձ, ծնուցիչ.
Лав-ка, лав-окъ, կրպակ.
Лод-ка, лод-окъ, նաւակ, մակոյկ.
Сам-ка, сам-окъ, քած, (է հասարակ անուն էից, որ ունի զան- խօսուն կենդանեաց.)
Дос-ка, дос-окъ, տախտակ.
Теш-ка, теш-окъ, մօրաքոյր, եւ՝ հօրաքոյր.

Հետագայ անուանց յոգնակի սեռականն յանգի 'ի екъ.

Кружка, екъ, ըմպանակ.
Пряжка, екъ, Ճարմանդ, (է օղ ինչ արծաթի եւ կամ յայլմէ նիւթոյ, զոր դնեն 'ի վերայ կօշկաց առ 'ի զարդ.)
Точка, екъ, վերջակէտ, կէտ.
Плошка, екъ, լապտեր.
Лайка, екъ, է ազգ ինչ կաշւոյ բարակ եւ կակուղ.
Сайка, екъ, նկանակ, գրտակ.

Ոմանք յանուանց՝ որք 'ի յոգնակի սեռականն եղերին 'ի жжа, ча, ша. а, փոխեն 'ի ей. որպ.

Вожжа, ей, պախուրց, դանդանաւանդ.
Парча, ей, դիպակ.
Праща, ей, պարսատիկ.
Роща, ей, անտառ, մայրի, ծառաստանք.
Чаща, ей, անտառախիտ, մայրի.

Тюрьма, յոգնակի սեռականն լինի тюремъ, բանտ.
Судьба, судебъ, և судьбина, նախասահմանութիւն, բաղդ, օրհաս, իրաւունք.

Свадьба, свадебъ, հարսանիք.
Серьга, серегъ, գինդ.
Тьма, темъ, խաւար. յոգնակի սեռականն չէ 'ի կիրառութ.
Сосна, сосенъ, սոճի.
Овца, овецъ, ոչխար, մաքի.
Игла, иголъ, ասեղն, եւ՝ Թրաձուկն.
Кукла, куколъ, պաճուճապատանք.
Икра, икоръ, ձուղպ.

Որք յանգին 'ի я.

	Եզական.		Յոգնական.	
Ուղղ.	Богин-я,	Չաստուածուհի.	Богин-и,	Չաստուածուհիք.
Սեռ.	Богин-и,	չաստուածուհւոյ.	Богин-ь,	չաստուածուհեաց.
Տրակ.	Богин-ѣ,	չաստուածուհւոյ, 'ի չաստուածուհի.	Богин-ямъ,	չաստուածուհեաց. 'ի չաստուածուհիս.
Հայց.	Богин-ю,	զչաստուածուհի.	Богин-ь,	զչաստուածուհիս.
Կոչակ.	Богин-я,	ո՛ չաստուածուհի.	Богин-и,	ո՛ չաստուածուհիք.
Գործ.	Богин-ею,	չաստուածուհեաւ.	Богин-ями,	չաստուածուհեօք.
Ներգ.	О богин-ѣ,	'ի չաստուածուհի.	О богин-яхъ,	'ի չաստուածուհիս.

	Եզական.		Յոգնական.	
Ուղղ.	Пул-я,	Ռումբ.	Пул-и,	Ռումբք.
Սեռ.	Пул-и,	ռմբոյ.	Пул-ь,	ռմբոց.
Տրակ.	Пул-ѣ,	ռմբոյ, 'ի ռումբ.	Пуля-мъ,	ռմբոց, 'ի ռումբս.
Հայց.	Пул-ю,	զռումբ.	Пул-и,	զռումբս.
Կոչակ.	Пул-я,	ո՛ ռումբ.	Пул-и,	ո՛ ռումբք.
Գործ.	Пул-ею,	ռմբով.	Пул-ями,	ռմբովք.
Ներգ.	О пул-ѣ,	'ի ռումբ.	О пул-яхъ,	'ի ռումբս.

Ըստ առաջին օրինակի հոլովին անուանք անկենդանեաց իրաց, յանդեալք 'ի я հանդերձ նախընթաց բաղաձայն տառիւ. որ̂. дыня, սեխ. доля, մասն, բաժին. пустыня, անապատ. баня, բաղանիք. милостыня, ողորմութիւն, տուրք. буря, մրրիկ, փոթորիկ: Իսկ ըստ երկրորդ օրինակի հոլովին անուանք կենդանեաց՝ յանդեալք 'ի я, հանդերձ նախընթաց բաղաձայն տառիւ. որպէս են սոքին. Герцогиня, դքսուհի. Графиня, կոմսուհի. Княгиня, իշխանուհի. дядя, հօրեղբայր, կամ քեռի:

Басня,	առակ, առասպել, 'ի յոգնակի սեռականն լինի басенъ,		
Вишня,	вишенъ,	բալ.	
Головня,	головенъ,	փայտ կիսայրեաց.	
Башня,	башенъ,	աշտարակ, բուրգն.	
Вечерня,	вечеренъ,	երեկոյեան ժամերգութիւն.	
Таможня,	таможенъ,	մաքսատուն, մաքսանոց.	
Земля,	земель,	հող, երկիր, կամ գետին.	
Грабли,	грабель, և	граблей,	տրմուխ, (փայտեայ գործի երկրագործաց.)
Капля,	капель,	շիթ, կաթիլ.	
Сабля,	сабель,	սուսեր, դաշոյն.	
Цапля,	цапель,	(է ազգ ինչ թռչնոց.)	

Г. ռ՝ Кухня, լինի кухней, խոհարան.

Спальня,	спальней,	ննջարան.
Дядя,	дядей,	հօրեղբայր, կամ մօրեղբայր, կամ քեռի.
Кудря,	кудрей,	գանգուր.
Тоня,	тоней,	տեղի ձկնորսութեան.
Парча,	парчей,	դիպակ.
Роща,	рощей,	անտառ, մայրի, կամ ծառաստանիկ ([illegible].)
Заря,	зарей,	արշալոյս, վերջալոյս, [illegible].

	Եզակի.		Յոգնակի.	
Ուղղ.	Витія,	Ճարտասան.	Витіи,	Ճարտասանք.
Սեռ.	Витіи,	Ճարտասանի.	Витій,	Ճարտասանից.
Տրակ.	Витіѣ,	առ Ճարտասան.	Витіямъ,	'ի Ճարտասանս.
Հայց.	Витію,	զՃարտասան.	Витій,	զՃարտասանս.
Կոչակ.	Витія,	ո՛ Ճարտասան.	Витіи,	ո՛ Ճարտասանք.
Գործ.	Витіею,	Ճարտասանաւ.	Витіями,	Ճարտասանօք.
Ներգ.	О витіи,	'ի Ճարտասանի.	О витіяхъ,	'ի Ճարտասանս.

	Եզակի.		Յոգնակի.	
Ուղղ.	Шея,	Պարանոց.	Шеи,	Պարանոցք.
Սեռ.	Шеи,	պարանոցի.	Шей,	պարանոցաց.
Տրակ.	Шеѣ,	'ի պարանոց.	Шеямъ,	'ի պարանոցս.
Հայց.	Шею,	զպարանոց.	Шей,	զպարանոցս.
Կոչակ.	Шея,	ո՛ պարանոց.	Шеи,	ո՛ պարանոցք.
Գործ.	Шеею,	պարանոցաւ.	Шеями,	պարանոցօք.
Ներգ.	О шеѣ,	'ի պարանոցի.	О шеяхъ,	'ի պարանոցս.

Ըստ առաջին օրինակի հոլովին անուանք կենդանեաց, եզերեալք ія. որք են սրբեն. Исаія, Եսայի. Илія, Եղիայ. Марія, Մարիամ. եւն. Իսկ ըստ երկրորդ օրինակաւ հոլովին անուանք անկենդանից, որոց վերջաւորութիւնք լինին ея, оя, уя, ья. որպէս.

Лядвея,	двеи,	ամոլաջիլ.	Имперія,	и,	տէրութի՛, կայսերութի՛.
Лилія,	и,	շուշան.	Судья,	и,	դատաւոր.
Молнія,	и,	փայլակն, կայծակն.	Статуя,	и,	արձան, կոթող, անդրի.
Семья,	и,	գերդաստան, ընտանիք.	Библія,	и,	Աստուածաշունչ գիրք.
Чешуя,	и,	թեփ ձկան.	Скамья,	и,	նստարան, աթոռ.
Келья,	и,	խուց.	Коллегія,	и,	ժողով, դիւան.

ՕՐԻՆԱԿՔ

Երկրորդ հոլովման անուանց գոյականաց։

Որք յանգին 'ի й.

	Եզակի։		Յոգնակի։	
Ուղղ.	Солов-ей,	Սոխակ.	Соловь-и,	Սոխակք.
Սեռ.	Соловь-я,	սոխակի.	Соловь-евъ,	սոխակաց.
Տրակ.	Соловь-ю,	'ի սոխակ.	Соловь-ямъ,	'ի սոխակս.
Հայց.	Соловь-я,	զսոխակ.	Соловь-евъ,	զսոխակս.
Կոչակ.	Солов-ей,	ո՛ սոխակ.	Соловь-и,	ո՛ սոխակք.
Գործ.	Соловь-емъ,	սոխակաւ.	Соловь-ями,	սոխակօք.
Ներգ.	О соловь-ѣ,	'ի սոխակի.	О соловь-яхъ,	'ի սոխակս։

	Եզակի։		Յոգնակի։	
Ուղղ.	Обычай,	Սովորութիւն.	Обычаи,	Սովորութիւնք.
Սեռ.	Обычая,	սովորութեան.	Обычаевъ,	սովորութեանց.
Տրակ.	Обычаю,	'ի սովորութիւն.	Обычаямъ,	'ի սովորութիւնս.
Հայց.	Обычай,	զսովորութիւն.	Обычаевъ,	զսովորութիւնս.
Կոչակ.	Обычай,	ո՛ սովորութիւն.	Обычаи,	ո՛ սովորութիւնք.
Գործ.	Обычаемъ,	սովորութեամբ.	Обычаями,	սովորութեամբք.
Ներգ.	О обычаѣ,	'ի սովորութեան.	О обычаяхъ,	'ի սովորութիւնս։

Ըստ այսմ առաջին օրինակի հոլովին անուանք կենդանեաց յանգեալք 'ի й. որպէս. водолей, ջրկիր, ջրհոս. муравей, մրջիւն. Моисей, Մովսէս. рой, պարք (մեղուաց.) Алексѣй., Աղեքսիոս, կամ Աղեքսիանոս. воробей, ճնճղուկ, ծիտ. злодѣй, թշնամի, չարագործ, եւ՝ օրինակաց։ Իսկ ըստ երկրորդ օրինակին հոլովին անուանք անկենդանեաց՝ յանգեալք նոյնպէս 'ի й. որպէս. покой, հանգիստ, եւ՝ փոքրիկ ջնա-

կարան ('ի տառն.) случай, *առիթ, պատահումն, դիպուած, ժամանակ պարապոյ.* улей; *փեթակ, բռիճ, մեղուանոց.* жребій, *վիճակ.* чай, *թէյ, կոր թեղո (չայ.)* бой, *և* сраженіе, *մարտ, պատերազմ.* пай, доля, часть, *մասն, բաժին.* край, *ծայր, ծագ, եզր, և՛ կողմն, վերջ, վախճան.* клей, *սօսինձ:*

Գիտելի է, զի միավանկ անուանք անկենդան իրաց՝ եզերեալք 'ի й, 'ի սեռական և 'ի ներգոյական հոլովս եզականին՝ երբ 'ի բազումս յանգեն 'ի ю, *մանաւանդ 'ի հասարակ խօսս. օր.* рой, *պարք (մեղուաց. սեռ. և ներգ.)* рою, въ рою. чай, чаю, въ чаю. бой, бою, на бою. клей, клею, на клею. край, краю, на краю. *եւն:*

Որք յանգին 'ի Ъ.

	Եզակի.		Յոգնակի.	
Ուղղ.	Воин-ъ,	*Զօրական.*	Воин-ы,	*Զօրականք.*
Սեռ.	Воин-а,	*զօրականի.*	Воин-овъ,	*զօրականաց.*
Տրակ.	Воин-у,	*'ի զօրական.*	Воин-амъ,	*'ի զօրականս.*
Հայց.	Воин-а,	*զզօրական.*	Воин-овъ,	*զզօրականս.*
Կոչակ.	Воин-ъ,	*ո՛ զօրական.*	Воин-ы,	*ո՛ զօրականք.*
Գործ.	Воин-омъ,	*զօրականաւ.*	Воин-ами,	*զօրականօք.*
Ներգ.	О воин-ѣ,	*'ի զօրականի.*	О воин-ахъ,	*'ի զօրականս.*

	Եզակի.		Յոգնակի.	
Ուղղ.	Стол-ъ,	*Սեղան.*	Стол-ы,	*Սեղանք.*
Սեռ.	Стол-а,	*սեղանոյ.*	Стол-овъ,	*սեղանոց.*
Տրակ.	Стол-у,	*'ի սեղան.*	Стол-амъ,	*'ի սեղանս.*
Հայց.	Стол-ъ,	*զսեղան.*	Стол-овъ,	*զսեղանս.*
Կոչակ.	Стол-ъ,	*ո՛ սեղան.*	Стол-ы,	*ո՛ սեղանք.*
Գործ.	Стол-омъ,	*սեղանով.*	Стол-ами,	*սեղանովք.*
Ներգ.	О стол-ѣ,	*'ի սեղանի.*	О стол-ахъ,	*'ի սեղանս:*

Ընդ առաջին օրինակաւ հոլովին անուանք կենդանեաց, յանգեալք 'ի ъ. որ. ритпоръ, ритпор-а, կամ ретпоръ, հռետոր, ճարտասան. Ангелъ-а, հրեշտակ, եւ՝ այն անուանակոչումն. человѣкъ-а, մարդ. графъ-а, կոմս. барсъ-а, ինձ, կամ փառանգ, (ղափլան.) тигръ-а, վագր, (քափլան.) стражъ-а, և стпорожъ, պահապան, դռնապան. Александръ-а, աղեքսանդր. Апостолъ-а, առաքեալ. аспидъ-а, (է ազգ ինչ չարաթոյն օձի.) бобръ-а, բեշկ մշկոյ, կուղբ, ջրշուն, (ղունդուզ:) Ըստ Բ երկրորդ օրինակաւ հոլովին ամենայն անուանք անկենդան իրաց՝ յանգեալք նոյնպէս 'ի ъ. որպիսի են բառքս. плодъ-а, պտուղ. громъ-а, որոտումն. законъ-а, օրէնք. снопъ-а, խուրձ, որայ. дворъ-а, սրահ, գաւիթ, պալատ, ապարանք. голосъ-а, ձայն. мечъ-а, սուսեր. листъ-а, թերթ թղթոյ, եւ՝ տերև. брусъ-а, (է ազգ ինչ քառակուսի յեսանի, յորոյ վերայ սրեն զգանակ և զկացի- նս.) եւ՝ գերան, հեծան. образъ-а, պատկեր, օրինակ, նմանք. мѣхъ-а, տիկ, եւ՝ փուքք, մորթ. жеребецъ-бца, մատակախառն ե- րիվար. жеребенокъ-нка, մտրուկ.

Ծանօթութիւն. Ա: Անունք յանուանց անկենդան իրաց, մանաւանդ բայանուանց. նոյնպէս որք նշանակեն զմիութ, զժամանակ, զտեղի, 'ի խօսս և 'ի շարադրութիւն 'ի սեռականն և 'ի ներգոյականն հոլովս ե- ղակի թուոյ յանգին 'ի у. որ. долгъ, (սեռ:) долгу, (ներգ:) въ долгу. յանօթութիւն, փոխ, պարտք. домъ, տուն, дому, въ дому. лѣсъ, անտառ, մայրի, лѣсу.

Бархатъ,	бархату,	թաւշինջ, թաւիշ, (քատիֆէ, [illegible].)
А'тласъ,	а́тласу,	աշխարհացոյց.
Атла́съ,	атла́су,	անկիւտ, (ատլաս.)
Срокъ,	сроку,	ժամանակամիջոց, սահմանեալ ժամանակ.
Шумъ,	шуму,	աղաղակ, կոչումն, աղմուկ, շփոթ.

Бисеръ, бисеру, ուլունք, ուլն. перло, жемчугъ, } մարգարիտ.

Воскъ, воску, մոմ. Сахаръ, сахару, շաքար.
Ледъ, льду, սառն, սառոյցք. Годъ, году, ամ, տարի.
Бокъ, боку, կող. Сокъ, соку, աւիշք, հիւթ.
Попъ, попу, քերմն.

Է. Անուանք յանգեալք 'ի ецъ, екъ, окъ. 'ի շարտուղի հոլովս երկուց թուոց՝ կորուսանեն զտառս е. Օր.

Оп-ецъ; оп-ца, оп-цу, հայր. Եւն.
Агн-ецъ, агн-ца, գառն.
Бор-ецъ, бор-ца, ըմբիշ, ըմբշամարտիկ.
Опо-екъ, опой-ка, մաշկ, լեշկամաշկ, (որթու.)
Внуч-екъ, внуч-ка, թոռն.
Клуб-окъ, клуб-ка, կծիկ.
Гуд-окъ, гуд-ка, քնար, կիթառ.

Բայց՝ յաջորդ անուանքդ պարզ ձեւանան.

Жне-цъ, жне-ца, հնձօղ.
Мудре-цъ, мудре-ца, իմաստուն, զգօն.
Стрѣле-цъ, стрѣль-ца, աղեղնաւոր, կիծնետօղ.
Жре-цъ, жре-ца, քուրմ.
Пришле-цъ, пришле-ца, պանդուխտ, օտարական.
Льсте-цъ, льсте-ца, փաղաքուշ, շողոմարար.
Кузне-цъ, кузне-ца, դարբին.
Черне-цъ, монахъ, черне-ца, միանձն, աբեղայ.
Мертве-цъ, мертве-ца, մեռեալ.
Бое-цъ, бой-ца, մարտիկ, պատերազմօղ, կռուողեան.
Зае-цъ, зай-ца, նապաստակ.
Владѣле-цъ, владѣль-ца, իշխօղ, իշխան.

Пале-цъ, паль-ца, մատն.
Бок-ъ, бок-а, կող.
Потокъ-ъ, поток-а, հեղեղատ.
Урок-ъ, урок-а, դաս, (զոր առնու աշակերտն 'ի վարժապետէն.)
Чеснок-ъ, чеснок-а, խստոր.
Ѣдок-ъ, Ѣдок-а, շատակեր.
Рок-ъ, рок-а, նախասահմանութի, բախտ, կամ օրհաս:

դ: Левъ, առիւծ, 'ի սեռականն լինի льва.

Ровъ, рва, փոս, գուբ, ջրհոր, խրամ.
Коверъ, ковра, գորգ, օթոց, (խալի, կարպետ, խալիչայ.)
Орелъ, орла, արծիւ,
Уголъ, угла, անկիւն, խորշ.
Хохолъ, хохла, ցցունք, կամ կատար. (է փետրիկն գլխոյ աքաղա-
ղի, և այլ ոմն հաւուց.)
Чехолъ, чехла, (քառակուսի ծածկոյթ ինչ կառաց և այլոց.)
Щеголъ, щегла, Թռչուն ինչ ճնճղկաչափ:
Оселъ, осла, էշ.
Ротъ, рта, բերան.
Лобъ, лба, ճակատ.

ե: Անուանք յանգեալք 'ի ецъ, 'ի գործիականն եզականին լինին емъ, և 'ի յոգնականի սեռականն евъ. որ:

Агнецъ, агнцемъ, агнцевъ, գառն.
Младенецъ, младенцемъ, младенцевъ, մանուկ տղայ, կամ երեխայ.
Отецъ, отцемъ, отцевъ, հայր.

զ: Անուանք՝ եզերեալք 'ի гъ, жъ, къ, хъ, чъ, шъ, щъ, յուղ-ղականն յոգնականին զտառս ъ, փոխեն 'ի и. որ:

Друг-ъ, друзья, друг-и, բարեկամ.
Супруг-ъ, супруг-и, ամուսին, կին.

Нож-ъ, нож-и, դանակ ։

Слух-ъ, слух-и, լսելիք, կամ լուր, կամ համբաւ ։

Барыш-ъ, барыш-и, շահ, (է վաստակն զոր շահի ոք ՚ի վաճառէ,) կամ օգուտ ։

Грош-ъ, грош-и, (է դրամ ինչ Ֆիօրէնցացւոց ։)

Меч-ъ, меч-и, սուր, սուսեր ։

Богач-ъ, богач-и, հարուստ, մեծատուն ։

Դ։ Ունումք ՚ի յոգնակի ուղղականն փոխանակ ы, կամ и, առաւելն յանգին ՚ի a, շեշտիւ հանդերձ ։ որ ։

Берегъ, берега̀, եզր, ափն ։

Глазъ, глаза̀, աչք, աչն ։

Лѣсъ, лѣса̀, անտառ, մայրի ։

Рукавъ, рукава̀, թեզանիք, թեւ զգեստուց ։

Իսկ ունումք ինչ ՚ի հաստատուն բանս յանգին յուղղականն յոգնակի ՚ի ья, ՚ի սեռականն ՚ի ьевъ, ուրեք ուրեք և ՚ի ей. որ ։

Брашъ, брашья, брашьевъ, եղբայր, եղբարք, եղբարց ։

Брусъ, брусья, брусьевъ, յեսան, գերան, յեսանք, յեսանաց, գերանաց ։

Лисшъ, лисшья, лисшьевъ, թերթ թղթոյ, թերթք, թերթից, կամ տերև, սաղարթ ։

Другъ, друзья, друзей, բարեկամ, բարեկամք, բարեկամաց ։

Сынъ, сыновья, сыновей, որդի, որդիք, որդւոց ։

Բ. յայսմ ունիմք ՚ի յոգնակի տրականն յանգին ՚ի ямъ, ՚ի գործիականն ՚ի ями, և ՚ի ներգոյականն ՚ի яхъ. որ ։

Сыновья, որդիք ։ сыновьямъ, որդւոց ։ сыновьями, որդւովք ։ о сыновьяхъ, յորդիս ։

Друзья, բարեկամք ։ друзьямъ, բարեկամաց ։ друзьями, բարեկամօք ։ о друзьяхъ, ՚ի բարեկամս ։ այսոքիկ համանգոյնք ։

Է. Անուանք մատաղ կենդանեաց՝ յանգեալք 'ի окъ, 'ի յոգնականին ելք 'ի բազում զայս վերջաւորութիւն փոխեն 'ի ата, կամ ята. որ.

Медвѣженокъ,	медвѣжата,	կորիւն, (արջու.)
Щенокъ,	щенята,	լակոտ, կորիւն.
Поросенокъ,	поросята,	խոզ քոսակ, (խոզի ձագ.)
Ягненокъ,	ягнята,	գառնեակ, գառնիկ.

Ը. Անունդ Քս, 'ի խոտորմանս հոլովոց կորուսանէ զվանկս съ, այսպէս. Христосъ, Քրիստոս. Христа, Քրիստոսի. Христу, Քրիստոսի, 'ի Քրիստոս. Христомъ, Քրիստոսիւ. О Христѣ, 'ի Քրիստոս. և յոգնականին ոչ է 'ի կիր.

Բառքդ Богъ, Ա.Ծ. 'ի կոչական հոլովն եզակի լինի Боже! Ա.Ծ. Христосъ, Քս. Христе! Քս. Іисусъ, Յս. Іисусе! Յս. Отецъ, հայր. отче! հայր. Сынъ, որդի. сыне! որդի.

Բառքդ Господинъ, տէր. յուղղական յոգնակի՝ լինի господа, տեարք. бояринъ, և баринъ. պարոն, տէր, կամ իշխան, бояре. хозяинъ, տանուտէր, տէր. хозяева, տանուտեարք. Грузинъ, Грузинецъ, վրացի. Грузины, Грузинцы, վրացիք, վերիացիք.

Որք յանգին 'ի инъ.

	Եզակի.		Յոգնակի.	
Ուղղ.	Дворянин-ъ,	Ազնուական.	Дворян-е,	Ազնուականք.
Սեռ.	Дворянин-а,	ազնուականի.	Дворян-ъ,	ազնուականաց.
Տրակ.	Дворянин-у,	յազնուական.	Дворян-амъ,	յազնուականս.
Հայց.	Дворянин-а,	զազնուական.	Дворян-ъ,	զազնուականս.
Կոչակ.	Дворянин-ъ,	ո ազնուական.	Дворян-е,	ազնուականք.
Գործ.	Дворянин-омъ,	ազնուականաւ.	Дворян-ами,	ազնուականօք.
Ներգ.	О дворянин-ѣ,	յազնուականի.	О дворян-ахъ,	յազնուականս.

Ընդ այսու օրինակաւ հոլովին այն անուանք, որք նշանակեն զհայրենի, զմիջակ և զկոչումն, 'ի инъ յանգեալք. որպ.:

Граждан-инъ, քաղաքացի, (յոգն. : ուղղ. :) граждан-е, քաղաքացիք.
Крестьян-инъ, е, мужикъ, գեղջուկ, շինական, գռեհիկ, ռամիկ.
Римлян-инъ, е, հռովմայեցի.
Мѣщан-инъ, е, սովական, կամ պարզ ժողովրդական քաղաքի,
Россіян-инъ, е, ռուս.
Персіян-инъ, е, պարսիկ.
Бояр-инъ, е, իշխան, եւ՝ տէր, պարոն.
Самарян-инъ, е, սամարացի.
Христіян-инъ, е, քրիստոնեայ.
Лютеран-инъ, е, լուտերական:

Որք յանգին 'ի ь.

	Եզակի :	Յոգնակի :
Ուղղ. :	Царь, Թագաւոր.	Цари, Թագաւորք.
Սեռ. :	Царя, Թագաւորի.	Царей, Թագաւորաց.
Տրակ. :	Царю, 'ի Թագաւոր.	Царямъ, 'ի Թագաւորս.
Հայց. :	Царя, զԹագաւոր.	Царей, զԹագաւորս.
Գիտելի է. զի յայլազգական լեզուս՝ ի խոնարհմանս բայից գըտանին նա և ստորադասական և ըղձական եղանակք, որք ի լեզուի ռուսաց ձևանան սահմանական եղանակաւ յաւելլով ի նոյն զմի ի հետևորդ մասնկանցդ՝ бы, եթէ, թէ. да, այո, այդպէս. և чтобы, дабы, որպէս զի, առ ի. օր. Должно трудиться въ юности, дабы въ старости быть спокойну. պա՛րտ է վաստակել ի մանկութեան, առ ի անդորր լինել ի ծերութեան. Да сохранитъ тебя Богъ. պահեսցէ զքեզ Այ.

Յաղագս ժամանակաց ։

Ժամանակն ըստ ռուսաց (время վրեմեա) է այնպիսի վերջաւորութիւն բայի, որ ցուցանէ թէ յինչ ժամանակ վերաբերել պիտի զայն, զորմէ ասի. օրինակ իմն. յորժամ ասեմք, թէ Солнце освѣщаетъ землю. արեգակն լուսաւորէ զերկիր, բայդ освѣщаетъ, ըստ վերջաւորութեան իւրում ցուցանէ, թէ ներգործութիւն արեգական որ ՚ի վերայ երկրի, վերաբերի առ ներկայ ժամանակն. Александръ побѣдилъ Дарія. Աղեքսանդր յաղթեաց Դարեհի. ուր բայդ побѣдилъ ըստ վերջաւորութեան իւրում յայտ առնէ, թէ ստորոգեալն զԱղեքսանդրէ, վերաբերի յանցեալ ժամանակն. Праведные за добрыя дѣла свои въ будущей жизни получатъ воздаяніе. արդարքն վասն բարեաց գործոց իւրեանց ընկալցին զհատուցումն ՚ի հանդերձեալ կեանս. յայսմ բանի վերջաւորութիւն բայիս получатъ ցուցանէ, թէ սահմանեալն վասն արդարոց կատարի յապառնի ժամանակի ։ Այլ արդ ժամանակն է կամ ներկայ, կամ անցեալ, և կամ ապառնի ։

«Ներկայն» (որ ՚ի ռուսս լսի настоящее նաստօեաշչեե) է, որով նշանակի առաջիկայ լինելութիւն գործողութեան կամ կրելութեան իրին. օր. Солнце восходитъ : արեգակն ծագի ։

Անկատարն (ըստ ռուսաց прошедшее неопредѣленное, կամ несовершенное պրօշետշեե նեօպրետելեննօե, կամ նեսօվերշեննօե) է, որով նշանակի լինելութիւն, գործողութիւն, կամ կրելութիւն իրին անկատարելապէս անցեալ, և կամ սկսեալ. բայց ոչ կատարեալ. օր. Солнце восходило. արեգակն ծագէր ։

Կատարեալն (ըստ ռուսաց прошедшее совершенное պրօշետշեե սօվերշեննօե) նշանակէ զառս կամ զկիրս իրին արդէն իսկ կատարեալ. օր. Солнце взошло. արեգակն ծագեցաւ ։

Գիտելի է, զի առ ռուսս գտանի և ժամանակ ինչ՝ անուանեալ прошедшее однократное պրօշետշեե օտնօկրատնօե, որ նշանակէ

զատս, կամ զկէրս երէն միանգամ վճարեալ, կամ որպէս թէ յանկար-ծուստ իմն կատարեալ։ Արդ՝ անուն, կամ կերպաւոր այսր ժամանա-կի օտար է 'ի լեզուէ մերմէ. որպէս և ոմանց ժամանակաց. այլ՝ սա ընդ դիպելոյ հարկին բարւոք թուեցաւ բացատրել կատարեալ ժամանակաւ քան այլով. օրինակ իմն. Онъ меня тронулъ. Նա շար-ժեաց զիս. որով հնար է իմանալ, թէ միանգամ, կամ յանկարծուստ իմն շարժեաց։

Յարակատարն, կամ գերակատարն (давнопрошедшее դավնօպրօ-շեդշեե) է, որ նշանակէ զատս, կամ զկէրս վաղագոյն վճարեալ. օր. Я къ нему писывалъ. Ես գրեալ եմ կամ գրեալ էի առ նա. որով իմանի յարակատարն և գերակատարն համանգամայն։

Ապառնին (будущее բուդուշչեե) նշանակէ զատս և զկէրս երէն որ հանդերձեալ է դիպել յապագայ ժամանակի. և բաժանի յան-կատար. միոյ նուագի. և կատարեալ.

Անկատար ապառնին (будущее неопредѣленное կամ несовершенное բուդուշչեե նեօպրեդելեննօե, կամ նեսօվերշեննօե) ցուցանէ զա-պառնի գործողութիւն, և զկրելութիւն անորոշաբար. օր. Я къ нему буду писать. Ես գրելոց եմ առ նա, կամ ես գրեցից առ նա։

Միոյ նուագի ապառնին (будущее однократное բուդուշչեե օդ-նօկրատնօե) նշանակէ զապառնի գործողութիւն կամ զկրելութիւն, որ մի-անգամ հանդերձեալ է լինել. օր. Я его трону. Ես շարժեցից զնա։

Աստանօր ծանիր. զի այս ժամանակք ոչ գտանին 'ի հայումս ընդ յատուկ ոճոյ. վասն զի թէ սա և թէ այլ ուրեք ստիպեցեմք այլ ազգ-ինչ ընել, այն միայն առ 'ի բացատրութիւն ռուսաց բառին է, և ոչ օրինակ կամիմք լինել առ 'ի մուծանելոյ զոճ օտար 'ի հայկական լեզու։

Կատարեալ ապառնին (будущее совершенное բուդուշչեե սօվեր-շեննօե) է, յորում բայն ցուցանէ զատս, և զկէրս կատարելապէս ե-ղանելի յապագայ ժամանակի. օր. Я эту книгу прочту, и къ

вамъ возвращу․ ես ընթերցայց զգիրս զայս և դարձուցից առ ձեզ։

Գիտելի է․ զի բայք բարդեալք, որք ունին զերկուս կատարեալ ժամանակս, ունին և եւս զերկուս կատարեալ ապառնիս․ օր․ сдвигаю և сдвину, շարժեցից։

Յաղագս թուոց։

Թիւք բայից են կրկին, որպէս և անուանց, եզակի և յոգնակի․

Եզակին (ի ռուսաց единственное եդինստվեննոե) է այն, յորում խօսի մի անձն․ կամ ասի զանձնէ միոջէ․ օր․ Я пишу, ես գրեմ․ ты читаешь, դու ընթեռնուս․ онъ учитъ, նա ուսուցանէ։

Յոգնակի (ի ռուսաց множественное մնօժեստվեննոե) է այն, յորում խօսին բազում անձինք, կամ ասի զբազում անձանց․ օր․ Мы читаемъ, մեք ընթեռնումք․ вы пишите, դուք գրէք․ они пишутъ, նոքա գրեն։

Յաղագս դիմաց։

Դէմք (лице լիցէ) բայից երեք են ի դերանուանց յերկաքանչիւր թիւս եւս․ առաջին, երկրորդ, երրորդ։

Առաջին դէմքն է այն, որ հաղորդէ զմիտս իւր այլում, որ և ձևանայ դերանուամբդ․ я, ես․ мы, մեք․ օր․ Я говорю, ես խօսիմ․ мы говоримъ, մեք խօսիմք։

Երկրորդ դէմքն է այն, որում առաջին դէմն հաղորդէ զմիտս իւր․ օր․ ты говоришь, դու խօսիս․ вы говорите, դուք խօսիք․

Երրորդ դէմքն է այն, զորմէ առաջին դէմն հաղորդէ զմիտս իւր երկրորդին, կամ զորմէ ասէ երկրորդին․ օր․ онъ, она, оно, говоритъ, նա խօսի․ они, онѣ, говорятъ, նոքա խօսին։

Գիտելի է․ զի բայք բաժանին ՚ի կանոնաւորս և յանկանոնս․ ՚ի դիմաւորս և ՚ի դիմազուրկս։ Կանոնաւորք (ասացեալ ՚ի ռուսաց правильные պրավիլնիե) են այնք, որք յամ եղանակս և ՚ի ժամանակս փոփոխեն զվերջաւորութիս իւրեանց ի հասարակ կանոնաց լծորդուեց․ читаю, ընթեռնում․ читалъ, ընթեռնուի․ читай, ընթերցի՛ր․ читать, ընթեռնուլ։

Անկանոնք (ըստ ռուսաց неправильные նեպրավիլնիե) են այնք, որք ոչ գտեալ երթան հասարակ կանոնաց լծորդութեց, այլ՝ զարտաղին յեղանակս կամ 'ի ժամանակս ինչ, և կամ պակասին և յայլոց լրանան․ օր․ беру, առնում․ взялъ, առի, առեր, էառ․ возьму, առից․ даю, տամ․ далъ, ետու, ետուր, ետ․ дамъ, տաց․ Ѣмъ, ուտեմ․ Ѣдятъ, ուտեն։ Դիմաւորք (личные լիչնիե) են այնք, որք 'ի ձեռն երից դիմաց յերկուսին թիւս են լծորդին․

Դիմազուրկք (безличные բեզլիչնիե) են այնք, որք յամ ժամանակս, 'ի կիր ածին յերրորդ դեմս միայն եզակի թուոյ, և համարին միշտ չեզոքական սեռի․ օր․ кажется, թուի, երևի․

Յաղագս սեռից․

Կրաւորական բայք ըստ ռուսաց ունին զերիս սեռս յամ ժամանակս․ բայց միւս բայքն յանցեալ ժամանակս միայն եզակի թուոյ․ օր․ бываю посылаемъ, ма, мо, առաքիմ․ былъ посланъ, была послана, было послано, առաքեցայ, ար, աւ․ буду посланъ, а, о, առաքեցայց․ относился, лась, лось, վերաբերեցաւ։

Գիտելի՛ է․ զի առ ռուսս կրկին է սեռն․ մին կոչի залогъ․ զալօղ, սեռ․ որ ձևանայ 'ի նշանակութե բայից որպէս և առ մեզ, իսկ միւսն կոչի родъ րօդ, սեռ, զոր հնար է որոշել ըստ վերջաւորութե նոցին, որպէս երևի 'ի վերոգրեալ օրինակդ․ իբր զի եթէ ժամանակ բային եզերեալ իցէ 'ի ъ, համարի արական սեռի, եթէ 'ի а, իգական սեռի, իսկ եթէ 'ի о, չեզոքական սեռի։

Յաղագս լծորդութեանց։

Լծորդութիւն (ըստ ռուսաց спряженіе սպրեաժենիե) է փոփոխութի կամ պէսպիսութի վերջաւորութեց բայից ըստ խոնարհմանց, ըստ ժամանակաց, ըստ դիմաց, և ըստ թուոց։ որ յամանց քերթողաց ռուսաց համարին քառակի, և յամանց նորոց երկակի․ մեք և մեր գտեալ երթեալ նորոցն՝ եդաք զկրկնակի լծորդութիւն 'ի խոնարհմունս բայից։

Առաջին լծորդութիւն փակէ ընդ իւր զբայս, որք յանգին ընդ եզականին 'ի ешь յերկրորդ դէմս ներկայի սահմանականին. և ընդ յոգնականին 'ի утъ, կամ ютъ յերրորդ դէմս. օր. пишу, գրեմ. пишешь, գրես. пишутъ, գրեն. посылаю, առաքեմ, յղեմ. посылаешь, առաքես. посылаютъ, առաքեն. եւն:

Երկրորդ լծորդութիւն պարունակէ յինքեան զբայս, որք եզերին 'ի ишь, ընդ եզականին յերկրորդ դէմս ներկայի սահմանականին, այլ յերրորդ դէմս յոգնականին յանգին 'ի атъ, կամ ятъ. օր. держу, ունիմ, պահպանեմ, ըմբռնեմ. держишь, ըմբռնես. держатъ, ըմբռնեն. верчу. պտուտեմ. вертишь, պտուտես. вертятъ, պտուտեն. այլովքն հանդերձ:

Օրինակ խոնարհման էական բայի:

(есмъ, եմ:)

Սահմանական եղանակի ներկայ:

	Եզակի:			Յոգնակի:	
Я есмь,	ուղէն 'ի չէր առաւելորդ:	եմ.	Мы есмы	ուղէն 'ի չէր:	եմք.
Ты еси,		ես.	Вы есте		էք.
Онъ, Она, оно,	есть	է.	Они, онѢ	суть	են.

Անկատար և կատարեալ: Եզակի:

Я былъ, а, о, էի, կամ եղէ. Онъ былъ, Она была, էր, կամ եղև.

Ты былъ, а, о, էիր, կամ եղեր. Оно было,

Յարակատար և գերակատար:

Я бывалъ, а, о, էի, կամ եղէ. Онъ бывалъ, Она бывала, եղեալ է, էր.

Ты бывалъ, а, о, եղեալ ես, էիր. Оно бывало.

Յոգնակի ։

Мы, Вы, Они, Онѣ } бывали

եղեալ եմք, կամ էաք,
եղեալ էք, կամ էիք,
եղեալ են, կամ էին.

Ապառնի ։

Եզակի ։	Յոգնակի ։
Я буду, եղէց,	Мы будемъ, եղիցուք,
Ты будешь, եղիցիս,	Вы будете, եղիջիք,
Онъ, а, о, будетъ, եղիցի,	Они, ѣ, будутъ, եղիցին.

Հրամայական եղանակ ։

Будь ты, լե՛ր,	Будьте вы, եղերո՛ւք,
Будь онъ, она, оно, կամ пусть будетъ, եղիցի՛,	Будь они, онѣ, կամ пусть будутъ, եղիցին.

Աներևոյթ ։ Быть, լինել, գոլ.

Ընդունելութիւն ներկայ ։ Сущій, ая, ее, որ է. էակ գոյող.
անցեալ ։ Бывшій, ая, ее, եղեալ.
ապառնի ։ Будущій, ая, ее, եղանելոց, եղանելի.

Գերբայ ներկայ ։ Будучи, լինելով, ի լինելն.
անցեալ ։ Бывъ, бывшій, լինելով, ի լինելն, լեալ.

Դիտելի՛ է ա ։ Զի բայքս այսոքիկ есмь, եմ կամ գոմ. և бываю, լինիմ կամ եղանիմ, յայն սակս կոչին էականք, զի բայս есмь, ՚ի ներկայ, ՚ի կատարեալ և յապառնի ժամանակս. իսկ բայս бываю, լինիմ կամ եղանիմ. յանկատար ժամանակի զօդին ի այլոց բայից ՚ի խոնարհմունս նոցին առ բաղկացուցանելոյ զայն ժամանակն, որք առանց օժանդակելոյ սոցին ոչ կարեն ի ինքեան ձևանալ. վասն և առ ռուսըս ասին вспомогательные, վսպօմօղատելնիե, այս է օժանդակք ։

բ ։ Բայդ стану յանկատար ապառնի ժամանակի առեալ լինի ՚ի տեղի էական բային буду, եղէց. զր. փոխանակ ասելոյ буду писать,

գրեցից. մարթ է ասել стану писать, գրեցից: Իսկ անցեալ ժամանակն այսր բայի՝ յարեալ յանկատար աներևոյթ եղանակն՝ նշանակէ զսկսուածս գործողութե. օր. сталъ писать, сталъ говорить. յր. սկսաւ գրել. սկսաւ խօսել:

գ: Առ ռուսս դժուարին է որոշել զդէմս բայից առանց դերանուան: Իսկ առ մեզ դէմքն ինքնին ճանաչին. վյ վայրապար և խափանիչ տեղւոյ համարեցաք կրկնել զնոսին առ իւրաքանչիւր եղանակ և ժամանակ. զի ՚ի յայտնիմն խորշելի է լինել զերեսս թղթոց և զընթերցողս ձանձրացուցանել: Բայց և այնպէս ոչ զանց արարաք դնել զնոսին ներգործութե առ հարկն պահանջեաց.

ՕՐԻՆԱԿ

Խոնարհմանց բայից:

Լծորդութե առաջին:

Ներգործական: Սահմանական եղանակի ներկայ:

Եզակի:	Յոգնակի:
Я двигаю, Շարժեմ,	Мы двигаемъ, շարժեմք,
Ты двигаешь, շարժես,	Вы двигаете, շարժէք,
Онъ, а, о, двигаетъ, շարժէ,	Они, ѣ, двигаютъ, շարժեն.

Անկատար:

Я двигалъ, շարժէի,	Мы двигали, շարժէաք,
Ты двигалъ, շարժէիր,	Вы двигали, շարժէիք,
Онъ, а, о, двигалъ, а, о, շարժէր,	Они, ѣ, двигали, շարժէին.

Կատարեալ:

Я	сдвигалъ,	շարժեցի,	Мы	сдвигали,	շարժեցաք,
Ты		շարժեցեր,	Вы		շարժեցէք,
Онъ, а, о,	а, о,	շարժեաց,	Они, ѣ,		շարժեցին.

Կատարեալ միոյ նուագի ։

Я		շարժլեցի ,	Мы		շարժլեցաք ,
Ты	двинулъ,	շարժլեցեր ,	Вы	двинули,	շարժլեցիք ,
Онъ	а ,	շարժլեաց ,	Они		շարժլեցին ։
а , о ,	о ,		Ѣ ,		

Յարակատար և գերակատար ։

Я	двиги-	շարժեալ եմ , էի ,	Мы	двиги-	շարժեալ եմք , էաք
Ты	валъ ,	շարժեալ ես , էիր ,	Вы	вали ,	շարժեալ էք , էիք ,
Онъ	а ,	շարժեալ է , էր ,	Они		շարժեալ են , էին ։
а, о,	о ,		Ѣ ,		

Ապառնի անկատար ։

Я буду		շարժելոց եմ ,	Мы будемъ		շարժելոց եմք ,
Ты будешь	дви-	շարժելոց ես ,	Вы будете	дви-	շարժելոց էք ,
Онъ, а , о,	гать	շարժելոց է ,	Они , Ѣ ,	гать	շարժելոց են ։
будетъ			будутъ ,		

Ապառնի կատարեալ ։

Я сдвигаю , շարժեցից , Мы сдвигаемъ , շարժեսցուք ,

Ты сдвигаешь , շարժեսցես , Вы сдвигаете , շարժեսջիք ,

Онъ, а, о, сдвигаетъ , շարժեսցէ , Они , Ѣ , сдвигаютъ , շարժեսցեն ։

Ապառնի միոյ նուագի ։

Я двину , շարժլեցից , Мы двинемъ , շարժլեսցուք ։

Ты двинешь , շարժլեսցես , Вы двинете , շարժլեսջիք ,

Онъ, а, о, двинетъ, շարժլեսցէ , Они , Ѣ , двинутъ , շարժլեսցեն ։

Հրամայական եղանակ ։

Անկատար ։

Двигай ты , շարժեա՛ , Двигайте вы , շարժեսցո՛ւք ,

Двигай онъ , а , о , կամ пусть двигаетъ , շարժեսցէ՛ , Двигай они , Ѣ , կամ пусть двигаютъ , շարժեսցե՛ն ։

Կատարեալ ։

Сдвигай ты , շարժեա՛ , Сдвигайте вы , շարժեսցո՛ւք ։

Сдвигай онъ, а, о, կամ пусть сдвигаетъ, շարժեսցէ,

Сдвигай они, ѣ, կամ пусть сдвигаютъ, շարժեսցեն.

Միոյ նուագի:

Двинемъ мы, շարժեսցուք,

Двинь ты, շարժեա՛,

Двиньте вы, շարժեսջի՛ք,

Двинь онъ, а, о, կամ пусть двинетъ, շարժեսցէ,

Двинь они, ѣ, կամ пусть двинутъ, շարժեսցեն.

Աներեւոյթ անկատար: Двигать, շարժել,

կատարեալ: Сдвигать, շարժել,

Միոյ նուագի: Двинуть, շարժել.

Ընդունելութիւն ներկայ, Двигивающій, ая, ее, շարժօղ,

անկատար: Двигивавшій, ая, ее, շարժեալ,

կատարեալ: Сдвигивавшій, ая, ее, շարժեալ,

անցեալ միոյ նուագի: Двинувшій, ая, ее, շարժեալ.

Դերբայ ներկայ: Двигая, Է շարժելն,

двигаючи, շարժելով,

անկատար: Двигавши, շարժեալ,

двигавъ, շարժելով, Է շարժելն,

անցեալ միոյ նուագի: Двинувши, շարժելով,

двинувъ, շարժեալ, Է շարժելն:

Երկրորդ լծորդութիւն:

Չեզոքական:

Սահմանական եղանակի ներկայ:

Եզակի:	Յոգնակի:
Я кричу, Աղաղակեմ,	Мы кричемъ, աղաղակեմք,
Ты кричишь, աղաղակես,	Вы кричите, աղաղակէք,
Онъ, а, о, кричитъ, աղաղակէ,	Они, ѣ, кричатъ, աղաղակեն.

Անկատար ։

Я	кри-	աղաղակէի ,	Мы	кри-	աղաղակէաք ,
Ты	чалъ	աղաղակէիր ,	Вы	ча-	աղակէիք ,
Онъ	а,	աղաղակէր ,	Они	ли	աղաղակէին ։
а, о, о,			Ѣ,		

Անցեալ ։

Я	закри-	աղաղակեցի ,	Мы	закри-	աղաղակեցաք ,
Ты	чалъ	աղաղակեցեր ,	Вы	ча-	աղաղակեցիք ,
Онъ а, о, а, о,		աղաղակեաց ,	Они Ѣ,	ли	աղաղակեցին ։

Անցեալ միանգամայն ։

Я	крик-	աղաղակեցի ,	Мы	крик-	աղաղակեցաք ,
Ты	нулъ	աղաղակեցեր ,	Вы	ну-	աղաղակեցիք ,
Онъ а, о, а, о,		աղաղակեաց ,	Они Ѣ,	ли	աղաղակեցին ։

Յարակատար և գերակատար ։

Я	кри-	աղաղակեալ եմ, էի ,	Мы	кри-	աղաղակեալ եմք , էաք ,
Ты	ки-	աղաղակեալ ես, էիր ,	Вы	ки-	աղաղակեալ էք , էիք ,
Онъ	валъ	աղաղակեալ է , էր ,	Они	ва-	աղաղակեալ են , էին ։
а, о, а, о,			Ѣ,	ли	

Ապառնի անկատար ։

Я буду	кри-	աղաղակելոց եմ ,	Мы будемъ	кри-	աղաղակելոց եմք ,
Ты будешь	чапь	աղաղակելոց ես ,	Вы будете	чапь	աղաղակելոց էք ,
Онъ а, о,		աղաղակելոց է ,	Они Ѣ,		աղաղակելոց են ։
будетъ			будутъ		

Ապառնի կատարեալ ։

Я закричу ,	աղաղակեցից ,	Мы закричимъ ,	աղաղակեսցուք ,
Ты закричишь ,	աղաղակեսցես ,	Вы закричите ,	աղաղակեսջիք ,
Онъ а, о, закричитъ,	աղաղակեսցէ ,	Они Ѣ, закричатъ,	աղաղակեսցեն ։

Ապառնի միոյ նուագի ։

Я крикну,	աղաղակեցից,	Мы крикнемъ,	աղաղակեսցուք,
Ты крикнешь,	աղաղակեսցես,	Вы крикнеше,	աղաղակեսջիք,
Онъ а, о, крикнетъ,	աղաղակեսցէ,	Они Ѣ, крикнутъ,	աղաղակեսցեն ։

Հրամայական եղանակ ։

Անկատար ։

Кричи ты,	աղաղակեա,	Кричите вы,	աղաղակեցէք,
Кричи онъ а, о, կամ пусть кричитъ,	աղաղակեսցէ՛,	Кричи они, Ѣ, կամ пусть кричатъ,	աղաղակեսցե՛ն ։

Կատարեալ ։

		Закричимъ мы,	աղաղակեսցուք,
Закричи ты,	աղաղակեա,	Закричите вы,	աղաղակեսջի՛ք,
Закричи онъ а, о, կամ пусть закричитъ,	աղաղակեսցէ՛,	Закричи они Ѣ, пусть закричатъ,	աղաղակեսցե՛ն ։

Միոյ նուագի ։

		Крикцемъ мы,	աղաղակեսցուք,
Крикни ты,	աղաղակեա,	Крикните вы,	աղաղակեսջի՛ք,
Крикни онъ а, о, կամ пусть крикнетъ,	աղաղակեսցէ՛,	Крикни они Ѣ, կամ пусть крикнутъ,	աղաղակեսցե՛ն ։

Աներևոյթ անկատար ։	Кричать,	աղաղակել,
կատարեալ ։	Закричать,	աղաղակել,
միոյ նուագի ։	Крикнуть,	աղաղակել ։
Ընդունելութիւն ներկայ ։	Кричащій, ая, ее,	աղաղակող ։
անկատար ։	Кричавшій, ая, ее,	աղաղակեալ,
կատարեալ ։	Закричавшій, ая, ее,	աղաղակեալ,
անցեալ միոյ նուագի ։	Крикнувшій, ая, ее,	աղաղակեալ ։
Դերբայ ներկայ ։	Крича,	աղաղակելով, կամ յաղաղակելն,
անկատար ։	Кричавши,	աղաղակելով, կամ
	кричавъ,	աղաղակեալ,

	կատարեալ •	Закричавши,	կամ
		закричавъ,	աղաղակելով •
Անցեալ	գոյ նուազէ •	Крикнувши,	աղաղակելով, կամ
		крикнувъ,	յաղաղակելն •

ՕՐԻՆԱԿ

Խոնարհման չէզոքական բայից •

Ձևոցումն առաջին •

Սահմանական եղանակի ներկայ •

Եզակի •			Յոգնակի •		
Я бываю	дви-	Շարժիմ,	Мы бываемъ	дви-	շարժիմք,
Ты бываешь	гаемъ	շարժիս,	Вы бываете	гае-	շարժիք,
Онъ а, о,	а,	շարժի,	Они ѣ,	мы	շարժին •
бываешь	о,		бываюшъ		

Անկատար •

Я былъ а, о,	շարժէի,	Мы были	շարժէաք,
Ты двиганъ	շարժէիր,	Вы двига-	շարժէիք,
Онъ а, о,	շարժէր,	Они ны	շարժէին •
а, о,		ѣ,	

Կատարեալ •

Я былъ а, о,	շարժեցայ,	Мы были	շարժեցաք,
Ты двиганъ	շարժեցար,	Вы двига-	շարժեցայք,
Онъ а, о,	շարժեցաւ,	Они ны	շարժեցան •
а, о,		ѣ,	

Կատարեալ գոյ նուազէ •

Я былъ а, о,	շարժեցայ,	Мы были	շարժեցաք,
Ты двинупъ	շարժեցար,	Вы дви-	շարժեցայք,
Онъ а, о,	շարժեցաւ,	Они нупы	շարժեցան,
а, о,		ѣ,	

Յարակատար և Գերակատար :

Я былъ а, о,	շարժեցեալ եմ, էի,	Мы были	շարժեցեալ եմք, էաք,
Ты двигиванъ	շարժեցեալ ես, էիր,	Вы дви-	շարժեցեալ էք, էիք,
Онъ а, о, а, о,	շարժեցեալ է, էր,	Они гива- ѣ, ны	շարժեցեալ են, էին .

Ապառնի անկատար :

Я буду дви-	շարժելոց եմ,	Мы будемъ дви-	շարժելոց եմք,
Ты будешь ганъ	շարժելոց ես,	Вы будете га-	շարժելոց էք,
Онъ а, о, а, о, будетъ	շարժելոց է,	Они ѣ, ны будутъ	շարժելոց են .

Ապառնի կատարեալ :

Я буду сдви-	շարժեցայց,	Мы будемъ сдви-	շարժեսցուք,
Ты будешь ганъ	շարժեսցիս,	Вы будете ганы	շարժիջիք,
Онъ а, о, а, о, будетъ	շարժեսցի,	Они ѣ, будутъ	շարժեսցին,

Ապառնի ձայ նուազէ :

Я буду дви-	շարժեցայց,	Мы будемъ дви-	շարժեսցուք,
Ты будешь нутъ	շարժեսցիս,	Вы будете ну-	շարժիջիք,
Онъ а, о, а, о, будетъ	շարժեսցի,	Они ѣ, ты будутъ	շարժեսցին .

Հրամայական եղանակ :

Անկատար :

Будь ты կամ дви-	շարժեա՛ց,	Будьте вы կամ дви-	շարժեցարո՛ւք,
пусть будетъ ганъ онъ а, о, а, о,	շարժեսցի՛,	пусть будутъ ганы они ѣ,	շարժեսցի՛ն .

Կատարեալ :

Будь ты կամ сдви-	շարժեա՛ց,	Будьте вы сдви-	շարժեցարո՛ւք,
пусть будетъ ганъ а, о, онъ а, о,	շարժեսցի՛,	пусть бу- дутъ они ѣ, ганы	շարժեսցի՛ն .

Մէյ նաւագէ

Будь ты дви- շարժեա՛ց, Будьте вы дви- շարժեսջիք,
пусть бу- нутъ շարժեսցի', пусть бу- нуты շարժեսցի՛ն.
детъ онъ а,о, а, о, дутъ они ѣ,

Աներևոյթ անկատար : Быть двигану, կամ двигаему, շարժիլ,
կատարեալ : Быть двигану, շարժիլ,
անցեալ ժամանակէ : Быть двинуту, շարժիլ.

Ընդունելութեան ներկայ : Двигаемый, ая, ое, շարժելի, կամ շարժելոց,
անկատար : Двиганный, ая, ое, շարժեցեալ,
կատարեալ : Сдвиганный, ая, ое, շարժեցեալ,
անցեալ ժամանակէ : Двинутый, ая, ое, շարժեցեալ.

Դերբայ ներկայ : Будучи двигаемъ, շարժելով, կամ
двиганъ, а, о, շարժեալ.
անկատար : Бывши կամ сдви- շարժեալ,
бывъ ганъ а,о, է շարժիլն.
կատարեալ : Бывши կամ сдви- շարժեալ,
бывъ ганъ а,о, է շարժիլն.
անցեալ ժամանակէ : Бывши կամ дви- շարժեալ,
бывъ нутъ а,о, է շարժիլն.

Օրինակ երկրորդ :

Կրաւորական բայի :

Սահմանական եղանակի ներկայ :

Եզակի :		Յոգնակի :	
Я бываю му-	տանջիմ,	Мы бываемъ му-	տանջիմք,
Ты бываешь чимъ	տանջիս,	Вы бываете чи-	տանջիք,
Онъ а, о, а, о, бываетъ	տանջի,	Они ѣ, мы бываютъ	տանջին.

Անկատար:

Я былъ	տանջէի,	Мы были	տանջէաք,
Ты а, о,	տանջէիր	Вы муче-	տանջէիք,
Онъ мученъ	տանջէր,	Они ны	տանջէին.
а, о, а, о,		Ѣ,	

Անցեալ:

Я былъ а, о,	տանջեցայ,	Мы были	տանջեցաք,
Ты замученъ	տանջեցար,	Вы заму-	տանջեցայք,
Онъ а, о,	տանջեցաւ,	Они чены	տանջեցան.
а, о,		Ѣ,	

Յարակատար և գերակատար:

Я былъ	տանջեցեալ եմ, էի,	Мы были	տանջեցեալ եմք, էաք.
Ты а, о,	տանջեցեալ ես, էիր,	Вы мучи-	տանջեցեալ էք, էիք,
Онъ мучи-	տանջեցեալ է, էր,	Они ваны	տանջեցեալ են, էին.
а, о, ванъ а, о,		Ѣ,	

Ապառնի անկատար:

Я буду му-	տանջելոց եմ,	Мы будемъ му-	տանջելոց եմք,
Ты будешь ченъ	տանջելոց ես,	Вы будете че-	տանջելոց էք,
Онъ а, о, а, о,	տանջելոց է,	Они Ѣ, ны	տանջելոց են.
будетъ		будутъ	

Ապառնի կատարեալ:

Я буду заму-	տանջեցայց,	Мы будемъ за-	տանջեսցուք,
Ты будешь ченъ	տանջեսցիս,	Вы будете му-	տանջեսջիք,
Онъ а, о, а, о,	տանջեսցի,	Они Ѣ, че-	տանջեսցին.
будетъ		будутъ нь	

Հրամայական եղանակ:

Անկատար:

Будь ты му-	տանջեա՛ց,	Будьте вы муче-	տանջեսցո՛ւք,
пусть бу- ченъ	տանջեսցի՛,	пусть бу- ны	տանջեսցի՛ն.
детъ онъ а, о, а, о,		дутъ они Ѣ,	

Կատարեալ :

Будь ты заму- տանջեա՛ց, Будьте вы заму- տանջեցարո՛ւք.
пусть бу- ченъ տանջեսցի՛, пусть бу- чены տանջեսցի՛ն.
детъ онъ а,о, а, о, дутъ они ѣ,

Աներևոյթ անկատար : Быть мучену, կամ мучиму, տանջիլ,
կատարեալ : Быть замучену, տանջիլ.

Ընդունելութիւն ներկայ : Мучимый, ая, ое, տանջելի, տանջելոց,
անկատար : Мученный, ая, ое, տանջեալ, տանջեցեալ,
կատարեալ : Замученный, ая, ое, տանջեալ, տանջեցեալ,

Դերբայ ներկայ : Будучи мучимъ, տանջելով, կամ
мученъ а, о, ի տանջիլն,
անկատար : Бывши, կամ, мученъ ի տանջիլն,
бывъ а, о, տանջեալ,
կատարեալ : Бывши, կամ, замученъ ի տանջիլն,
бывъ а, о, տանջեալ :

Գիտելի է. զի մի ոււսդի ժամանակն (однократное) բայիս бываю мучимъ, տանջիմ, պակասի յամ խոնարհմունս և յեղանակս յիւրաքանչիւր Թիւս, որպէս յայտ է 'ի վերոգրեալ օրինակէդ.

Յօրդունս տաջին փակէ ի ներև զամ բայս, որոց երկրորդ դէմ եղակի Թուոյ սահմանական եղանակին ներկայի յանգի 'ի ешь, համդերձ վերջընԹեր ձայնաւոր տառին. որ :

Учреждаю, учреждаешь, (ներգ.) հաստատեմ. կարգեմ. սահմանեմ. думаю, думаешь, (չէզոք.) կարծեմ. խորհիմ. խոկամ. желаю, желаешь, (ներգ.) ցանկամ. տենչամ. բաղձամ. мѣняю, мѣняешь, (ներգ.) փոխեմ. փոփոխեմ. чернѣю, чернѣешь, (չէզ.) սևանամ. мою, моешь, (ներգ.) լուանամ. ломаю, ломаешь, բեկանեմ. խորտակեմ. пою, поешь, (ներգ.) երգեմ. եղանակեմ. նուագեմ. рою, роешь, (ներգ.) փորեմ. копаю, копаешь, (ներգ.

պեղեմ։ сооружаю, сооружаешь, (Ներգ․) կանգնեմ։ կառուցանեմ։ շինեմ։ пользую, пользуешь, (Ներգ․) շահիմ։ օգտիմ։

Նոյն յաջորդ բայքդ ոչ հետևեն սմին ։

Клею, клеишь, (Ներգ․) սոսնձեմ։ дою, доишь, (Ներգ․) կթեմ։ (զկաթն․) пою, поишь, (Ներգ․) արբուցանեմ։ տամ ըմպել։ строю, строишь, (Ներգ․) կառուցանեմ։ կանգնեմ։
покою, покоишь, (Ներգ․) հանգուցանեմ։ հանգստացուցանեմ։
стою, стоишь, (Չէզոք․) կանգնիմ։ կայանամ։ стóю, стóишь, (Չէզոք․) արժեմ։ двою, двоишь, (Ներգ․) կրկնապատկեմ։ трою, троишь, (Ներգ․) երեքկնեմ։ եռապատկեմ։

Յանգեալքս 'ի бу, ву, гу, ду, зу, ку, ну, пу, ру, су, ту, պատշաճին նոյնպէս առաջին լծորդութե․ որ ։
зову, зовешь, (Ներգ․) կոչեմ։ հրաւիրեմ։ անուանեմ։ стригу, стрижешь, (Ներգ․) կտրեմ։ խուզեմ։ веду, ведешь, (Ներգ․) ածեմ։ առաջնորդեմ։ лѣзу, лѣзешь, (Չէզոք․) ելանեմ 'ի վեր։ грызу, грызешь, (Ներգ․) կրծեմ։ խածատեմ։ խայթեմ։ сѣку, сѣчешь, (Ներգ․) ծեծեմ։ ձաղկեմ։ հատանեմ։ пахну, пахнешь (Չէզոք․) բուրեմ։ արձակեմ զհոտ։ жму, жмешь, (Ներգ․) ճնշեմ։ սեղմեմ։ քամեմ։ деру, дерешь, խլեմ։ պատառեմ։ несу, несешь, (Ներգ․) տանիմ։ բերեմ։ կրեմ։ ածեմ զձու։ цвѣту, цвѣтешь, (Չէզոք․) ծաղկիմ։ плету, плетешь, (Ներգ․) հիւսեմ։ чту, чтешь, (Ներգ․) ընթեռնում։

Նոյն հետագայքդ խոտորին ։

Бѣгу, бѣжишь, վազեմ։ փախչիմ։ чту, чтишь, (Չէզոք․) պատուեմ։

Եւ յանգեալքն 'ի жду, են այսոքիկ ։

Врежу, вредишь, (Ներգ․) վնասեմ։ վնաս հասուցանեմ։ кажду, кадишь, (Ներգ․) խունկ արկանեմ։ нужду, нудишь, (Ներգ․) ստիպեմ։ բռնադատեմ։ тружу, трудишь, (Ներգ․) աշխատ առ-

նեմ ։ Լծորդումն երկրորդ փակէ ի ներքս զբայս, որք յերկրորդ դէմս եզակի թուոյ սահմանական եղանակի ներկայի յանգին 'ի ишь, համդերձ վերջընթեր բաղաձայն տառիւք. օր ։

Киплю, кипишь, եռամ ։ хвалю, хвалишь, (Ներգ ։) գովեմ ։ գրուատեմ ։ ներբողեմ ։ виню, винишь, (Ներգ ։) մեղապարտ առնեմ ։ ստգտանեմ ։ храню, хранишь, (Ներգ ։) պահեմ, պահպանեմ ։ говорю, говоришь, (Ներգ ։) խօսիմ ։ ասեմ ։ острю, остришь, (Ներգ ։) սրեմ ։ спорю, споришь, (Չէզոք ։) վիճեմ ։ կագեմ ։

Այլ հետևորդ բայքդ զարտուղին ։

Дремлю, дремлешь, (Չէզոք ։) նիրհեմ ։ колеблю, колеблешь, (Ներգ ։) տարաբերեմ ։ տատանեմ ։ каплю, каплешь, (Ներգ ։) կաթեմ ։ կաթիմ ։ կաթեցուցանեմ ։ спелю, спелешь, (Ներգ ։) պարզիմ ։ սփռեմ ։ տարածեմ ։ յատակեմ ։ քարայատակ առնեմ ։ орю, орешь, (Ներգ ։) վարեմ ։ հերկեմ ։ տրորեմ ։ գոչեմ ։ գոռամ ։

Որք յանգին 'ի жу, чу, шу, щу, են երկրորդ լծորդութե. օր ։
Вижу, видишь, (Ներգ ։) տեսանեմ ։ мучу, мучишь, (Ներգ ։) տանջեմ ։ խոշտանգեմ ։ լլկեմ ։ плачу, плашишь; (Ներգ ։) կարկատեմ ։ плачу, плашишь, (Ներգ ։) հատուցանեմ ։ վճարեմ ։ փոխարինեմ ։ нижу, низишь, (Ներգ ։) նուաստացուցանեմ ։ ցածուցանեմ ։ тѣшу, тѣшишь, (Ներգ ։) մխիթարեմ ։ мщу, мстишь, (Չէզոք ։) խնդրեմ ։ կամ պահանջեմ զվրէժ ։ мощу, мостишь, (Ներգ ։) սալայատակ յարդարեմ ։

Բայց 'ի յաջորդ բայիցդ ։

Вяжу, вяжешь, (Ներգ ։) կապեմ ։ кажу, кажешь, (Ներգ ։) խրնկեմ ։ лижу, лижешь, (Չէզոք ։) լիզում ։ мажу, мажешь, (Ներգ ։) օծանեմ ։ ржу, ржешь, (Չէզոք ։) խնճեմ ։ վրնջեմ ։ рѣжу, рѣжешь, (Ներգ ։) կտրեմ ։ հատանեմ ։ քանդակեմ ։ սպանանեմ ։ դժուարագիւտ լինիմ ։ алчу, алчешь, (Չէզոք ։) քաղցնում ։ плачу,

плачешь, (Չէզոք ։) լամ։ ողբամ։ ողամ։ прячу, прячешь, (Ներգ ։) Թագուցանեմ։ գաղեմ։ хочу, хочешь, (Չէզոք ։ ։) կամիմ։ пашу пашешь, (Ներգ ։) արօրադրեմ։ հերկեմ։ пишу, пишешь, (Ներգ ։, գրեմ ։ գծագրեմ։ чешу, чешешь, (Ներգ ։) սանտրեմ։ блещу) блещешь, (Չէզոք ։) փայլատակեմ։ փայլեմ։ ищу, ищешь, (Ներգ ։) որոնեմ։ հետազօտեմ клевещу, клевещешь, (Ներգ ։) ստգտանեմ։ մեղադրեմ։ բամբասեմ։ свищу, свищешь, (Չէզոք ։) շչեմ։ սուլեմ։ трепещу, трепещешь, (Չէզոք ։) սարսիմ, դարհուրիմ։ դողամ։

Յաղագս անկանոն բայից ։

Անկանոն բայք են այնք, որք ՚ի վերոյ եդեալ օրինակացդ երկուց ըծորդուեց զարտուղին ։ Անկանոն բայք բազմին ա ։ ՚Ի պէսպիսութէ վերջաւորութեց, որ ՚ի դէմս ոմանց ժամանակաց ․ որպ ։ Ѣмъ, ուտեմ․ шелъ, երթայր, կամ գնայր ․ дамъ, տաց ․ բ ։ ՚Ի փոխառութէ ոմանց ժամանակաց, որ ՚ի մերձաւոր նշանակութէ այլոց բայից, որոց ոչ ունելով զժամանակս ինչ, յայլոց ընդունին ․ որպ ։ բայս брать, առնուլ ․ ՚ի կատարեալ ժամանակի լինի взялъ, առի, յապառնի ժամանակի լինի возьму, առից ։

Խոնարհմունք անկանոն բայից ։

Աներևոյթ	անկատար ։	Ложиться,	Ընկողմանել,
	կատարեալ ։	Лечь,	ընկողմանել,
	յաճախական ։	Ложиться,	ընկողմանել ․

Սահմանական եղանակի ներկայ ։

Եզակի ։		Յոգնակի ։	
Я ложусь,	Ընկողմանիմ,	Мы ложимся,	ընկողմանիմք,
Ты ложишься,	ընկողմանիս,	Вы ложитесь,	ընկողմանիք,
Онъ а, о, ложится,	ընկողմանի,	Они ѣ, ложатся,	ընկողմանին ․

Անկատար.

Я ложился,	ընկողմանէի,	Мы ложи-	ընկողմանէաք,
Ты лася,	ընկողմանէիր,	Вы лися	ընկողմանէիք,
Онъ, лэся, а, о	ընկողմանէր,	Они, ѣ	ընկողմանէին.

Կատարեալ.

Я легъ,	ընկողմանեցայ,	Мы лег-	ընկողմանեցաք,
Ты легла,	ընկողմանեցար,	Вы ли	ընկողմանեցայք,
Онъ, легло, а, о	ընկողմանեցաւ,	Они, ѣ	ընկողմանեցան.

Յարակատար և գերակատար.

Я лажи-	ընկողմանեալ եմ, էի,	Мы ла-	ընկողմանեալ եմք, էաք,
Ты вался,	ընկողմանեալ ես, էիր,	Вы жи-	ընկողմանեալ էք, էիք,
Онъ, валася, а, о валося,	ընկողմանեալ է, էր,	Они, ва- ѣ лися	ընկողմանեալ են, էին.

Ապառնի անկատար.

Я буду ло-	ընկողմանեցայց,	Мы будемъ ло-	ընկողմանեսցուք,
Ты будешь, жить-	ընկողմանեսցիս,	Вы будете жить-	ընկողմանեսջիք,
Онъ, а, о ся будетъ	ընկողմանեսցի,	Они, ѣ ся будутъ	ընկողմանեսցին.

Ապառնի կատարեալ.

Я лягу,	ընկողմանեցայց,	Мы ляжемъ,	ընկողմանեսցուք,
Ты ляжешь,	ընկողմանեսցիս,	Вы ляжете,	ընկողմանեսջիք,
Онъ, а, о ляжетъ,	ընկողմանեսցի,	Они, ѣ лягутъ,	ընկողմանեսցին.

Հրամայական եղանակ անկատար.

Ложись,	ընկողմանեա՛,	Ложитесь	ընկողմանեցարո՛ւք,
пусть онъ, а, о ложится,	ընկողմանեսցի՛,	пусть они, ѣ ложатся,	ընկողմանեսցի՛ն.

Ապաքէալ :

		Ляжемъ,	ընկողմանեսցուք,
Лягъ,	ընկողմանեաց,	Лягте,	ընկողմանեսջի՛ք,
пусть онъ, а, о		пусть они, ѣ	
ляжетъ,	ընկողմանեսցի՛,	лягутъ,	ընկողմանեսցին .

Ընդունելութիւն ներկայ : Ложащійся, ընկողմանօղ,
անկատար : Ложившійся, ընկողմանեալ,
կատարեալ : Легшій, ընկողմանեալ .

Դերբայ ներկայ : Ложася, ընկողմանելով,
անկատար : Ложившись, ընկողմանելով, և ընկողմանելն,
կատարեալ : Легши, ընկողմանելով, կամ ընկողմանեալ :

Անկանոն բայս Давать, տալ՝ խոնարհի այսպէս :

Աներևոյթ անկատար : Давать, Տալ,
կատարեալ : Дать, տալ,
յաճախական : Давывать, տալ .

Սահմանական եղանակի ներկայ :

Եզակի :		Յոգնակի :	
Я даю,	Տամ,	Мы даемъ,	տամք,
Ты даешь,	տաս,	Вы даете,	տայք,
Онъ, а, о		Они, ѣ	
даетъ,	տայ .	даютъ,	տան .

Անկատար :

Я давалъ	տայի,	Мы дава-	տայաք,
Ты а,	տայիր,	Вы ли	տայիք,
Онъ, о	տայր .	Они,	տային .
а, о,		ѣ	

Կատարեալ ։

Я далъ, а, о,	ետու,	Мы дали	տուաք,
Ты	ետուր,	Вы	ետուք,
Онъ, а, о	ետ,	Они, ѣ	ետուն ։

Յարակատար և Գերակատար ։

Я давывалъ	տուեալ եմ, էի,	Мы давывали	տուեալ եմք, էաք,
Ты	տուեալ ես, էիր,	Вы	տուեալ էք, էիք,
Онъ, а, о	տուեալ է, էր,	Они, ѣ	տուեալ են, էին ։

Ապառնի անկատար ։

Я буду давать	տալոց եմ,	Мы будемъ давать	տալոց եմք,
Ты будешь	տալոց ես,	Вы будете	տալոց էք,
Онъ, а, о будетъ	տալոց է,	Они, ѣ будутъ	տալոց են ։

Ապառնի կատարեալ ։

Я дамъ,	տաց,	Мы дадимъ,	տացուք,
Ты дашь,	տացես,	Вы дадите,	տաջիք,
Онъ, а, о дастъ,	տացէ,	Они, ѣ дадутъ,	տացեն ։

Հրամայական անկատար ։

Давай ты,	տուր,	Давайте вы,	տուք,
пусть онъ, а, о даетъ,	տացէ,	пусть они, ѣ даютъ,	տացեն ։

Կատարեալ ։

Дай ты,	տուր,	Дайте вы,	տուք,
пусть, онъ а, о дастъ,	տացէ,	пусть они, ѣ дадутъ,	տացեն ։

Ընդունելութիւն ներկայ ։ Дающій, տուօղ,
անցեալ ։ Дававшій, տուեալ,
կատարեալ ։ Давшій, տուեալ ։
Դերբայ ներկայ ։ Дая, տալով, կամ ի տալն,
անցեալ ։ Дававшій, въ, տալով, կամ ի տալն,
կատարեալ ։ Давши, въ, տալով, կամ ի տալն ։

Անկանոն բայս идти, երթալ, գնալ կամ գալ, խոնարհի այսպէս ։

Աներեւոյթ անցեալ ։ Идти, Երթալ,
կատարեալ ։ Пойти, երթալ ։

Սահմանական եղանակի ներկայ ։

Եզակի ։		Յոգնակի ։	
Я иду,	Երթամ,	Мы идемъ,	երթամք ։
Ты идешь,	երթաս,	Вы идете,	երթայք,
Онъ, а, о идетъ,	երթայ,	Они, ѣ идутъ,	երթան ։

Անցեալ ։

Я шелъ,	երթայի,	Мы шли	երթայաք,
Ты шла,	երթայիր,	Вы	երթայիք,
Онъ, шло, а, о	երթայր,	Они, ѣ,	երթային ։

Կատարեալ ։

Я пошелъ,	չոգայ,	Мы пошли	չոգաք,
Ты пошла,	չոգար,	Вы	չոգայք,
Онъ, пошло, а, о,	չոգաւ,	Они ѣ	չոգան ։

Ապառնի անցեալ ։

Я буду идти երթալոց եմ, Мы будемъ идти երթալոց եմք,

Ты будешь иппи	երթալոց ես ,	Вы будете ип-	երթալոց էք ,
Онъ, а, о		Они, Ѣ пи	
будепъ	երթալոց է ,	будупъ	երթալոց են .

Ապառնի կատարեալ :

Я пойду ,	երթայց ,	Мы пойдемъ ,	երթիցուք ,
Ты пойдешь,	երթիցես ,	Вы пойдете,	երթիջիք ,
Онъ, а, о		Они, Ѣ	
пойдетъ ,	երթիցէ ,	пойдупъ ,	երթիցեն .

Հրամայական եղանակ :

Иди ты երթ՛ , երթիջի՛ր , կա՛մ երթիցե՛ս ,
пуспь онъ а , о идепъ, երթիցէ ,
Идипе вы , երթա՛յք , երթիջի՛ք ,
пуспь они, Ѣ идупъ , երթիցե՛ն .

Կատարեալ :

Пойдемъ , երթիցո՛ւք ,
Поди пы , երթ՛ , (կամ ե՛կ ,) Подипе вы , երթա՛յք , (կամ եկա՛յջի՛ք)
пуспь онъ а , о пой- пуспь они , Ѣ пой-
депъ , երթիցէ ; (կամ եկեսցէ՛ , дупъ, երթիցե՛ն , (կամ եկեսցե՛ն .)

Ընդունելութիւն ներկայ : Идущій , երթօղ ,
անցեալ : Шедшій , երթեալ ,
կատարեալ : Пошедшій , երթեալ .

Դերբայ ներկայ : Идя , идучи , երթալով , ի երթալն ,
անցեալ : Шедши, шедъ, երթալով , ի երթալն ,
կատարեալ : Пошедши , пошедъ , երթալով , ի երթալն :

Բայս иппи երթալ , գնալ , կամ գալ , ոչ ունի գլխաւորակատար , և գերակատար ժամանակ :

Շնկանոն բայս Ѣсть, ուտել՝ խոնարհի այսպէս։

Աներևոյթ անկատար։ Ѣсть, Ուտել,
կատարեալ։ Съѣсть, ուտել,
յաճախական։ Ѣдать, ուտել։

Սահմանական եղանակի ներկայ։

Եզակի։		Յոգնակի։	
Я ѣмъ,	Ուտեմ,	Мы ѣдимъ,	ուտեմք,
Ты ѣшь,	ուտես,	Вы ѣдите,	ուտէք,
Онъ, а, о ѣстъ,	ուտէ,	Они, ѣ ѣдятъ,	ուտեն.

Անկատար։

Я ѣлъ,	ուտէի,	Мы ѣли	ուտէաք,
Ты ла,	ուտէիր,	Вы	ուտէիք,
Онъ, а, о ло,	ուտէր,	Они, ѣ	ուտէին.

Կատարեալ։

Я съѣлъ,	կերայ,	Мы съѣли,	կերաք,
Ты ла,	կերար,	Вы	կերայք,
Онъ, а, о ло,	կերաւ,	Они, ѣ	կերան.

Յարակատար և Գերակատար։

Я ѣдалъ,	կերեալ եմ, էի,	Мы ѣда-	կերեալ եմք, էաք,
Ты а,	կերեալ ես, էիր,	Вы ли	կերեալ էք, էիք,
Онъ, о	կերեալ է, էր,	Они,	կերեալ են, էին.
а, о		ѣ	

Ապառնի անկատար։

Я буду ѣсть	ուտելոց եմ,	Мы будемъ ѣсть	ուտելոց եմք,
Ты будешь	ուտելոց ես,	Вы будете	ուտելոց էք,
Онъ, а, о будетъ	ուտելոց է,	Они, ѣ будутъ,	ուտելոց են,

Ապառնի կատարեալ։

Я съѣмъ,	կերայց,	Мы съѣдимъ,	կերիցուք,
Ты съѣшь,	կերիցես,	Вы съѣдите,	կերիջիք,
Онъ, а, о съѣсть,	կերիցէ,	Они, ѣ съѣдятъ,	կերիցեն.

Հրամայական եղանակ։

Ѣшь ты,	կե՛ր,	Ѣшьте,	կերէ՛ք,
пусть онъ, а, о ѣстъ,	կերիցէ՛,	пусть они, ѣ ѣдятъ,	կերիցե՛ն.

Կատարեալ։

		Съѣдимъ,	կերիցո՛ւք,
Съѣшь,	կե՛ր,	Съѣшьте,	կերիջի՛ք,
пусть онъ, а, о съѣстъ,	կերիցէ՛,	пусть они, ѣ съѣдятъ,	կերիցե՛ն.

Ընդունելութեան ներկայ։	Ѣдящій, և ядущій,	կերող, կամ ուտող,
անցեալ։	Ѣвшій,	կերեալ,
կատարեալ։	Съѣвшій,	կերեալ.
Դերբայ։	Ѣдя, և ядя,	ուտելով, կամ յուտելն,
	Ѣвши, въ,	ուտելով, կամ յուտելն,
	Съѣвши, въ,	յուտելն, կամ կերեալ։

Անկանոն բայս вести, ածել, տանել, կամ առաջնորդել՝ խոնարհի այսպէս։

Աներևոյթ անցեալ։	Водить, вести,	Ածել,
կատարեալ։	Свести,	ածել,
յաճախական։	Важивать,	ածել.

Սահմանական եղանակի ներկայ։

Եզական։		Յոգնական։	
Я веду,	Ածեմ,	Мы ведемъ,	ածեմք,
Ты ведешь,	ածես,	Вы ведете,	ածէք,
Онъ, а, о ведетъ,	ածէ,	Они, ѣ ведутъ,	ածեն.

Անկատար։

Я	велъ,	ածէի,	Мы	вели	ածէաք,
Ты	ла,	ածէիր,	Вы		ածէիք,
Онъ,	ло,	ածէր,	Они,		ածէին.
а, о			Ѣ		

Կատարեալ։

Я	свелъ,	ածի,	Мы	свели	ածաք,
Ты	ла,	ածեր,	Вы		ածին,
Онъ,	ло,	էած, կմ ած,	Они,		ածին.
а, о			Ѣ		

Յարակատար և Գերակատար։

Я	важи-	ածեալ եմ, էի,	Мы	важи-	ածեալ եմք, էաք,
Ты	валъ	ածեալ ես, էիր,	Вы	вали	ածեալ էք, էիք,
Онъ, а, о		ածեալ է, էր,	Они,		ածեալ են, էին.
а, о			Ѣ		

Ապառնի անկատար։

Я буду	вестъ	ածելոց եմ,	Мы будемъ	вестъ	ածելոց եմք,
Ты будешь		ածելոց ես,	Вы будете		ածելոց էք,
Онъ, а, о		ածելոց է,	Они, Ѣ		ածելոց են.
будетъ			будутъ		

Հրամայական եղանակ անկատար։

Веди ты,	ա՛ծ,	Ведите вы,	ածէ՛ք,
пустъ онъ, а, о ведетъ,	ածցէ՛,	пустъ они, Ѣ ведутъ,	ածցե՛ն.

Ընդունելութիւն ներկայ։	Ведущій,	ածող,
անկատար։	Ведшій,	ածեալ,
յարակատար և գերակատար։	Важивавшій,	ածեալ.

Դերբայ ներկայ։	Ведя, ведучи,	ածելով, ը ածելն,
անցեալ։	Ведши, ведъ,	ածելով, ը ածելն, ածեալ.

Գիտելի է. զի Է. այսու օրինակաւ խոնարհին բայքդ՝ блюсть, պահպանել, կամ զգուշանալ, блюду, պահպանեմ, կամ զգուշանամ. прясть, մանել, пряду, մանեմ:

Անկանոն բայս цвѣсть, ծաղկիլ՝ խոնարհի այսպէ՛ս:

Աներեւոյթ անկատար: Цвѣсть, Ծաղկիլ.

Սահմանական եղանակի ներկայ:

Եզակի:		Յոգնակի:	
Я цвѣту,	Ծաղկիմ,	Мы цвѣтемъ,	ծաղկիմք,
Ты цвѣтешь,	ծաղկիս,	Вы цвѣтете,	ծաղկիք,
Онъ а, о цвѣтетъ,	ծաղկի,	Они, ѣ цвѣтутъ,	ծաղկին.

Անկատար:

Я цвѣлъ,	ծաղկէի,	Мы цвѣли	ծաղկէաք,
Ты ла,	ծաղկէիր,	Вы	ծաղկէիք,
Онъ ло, а, о	ծաղկէր,	Они, ѣ	ծաղկէին.

Ապառնի:

Я буду цвѣсть	ծաղկեցայց,	Мы будемъ цвѣсть	ծաղկեսցուք,
Ты будешь	ծաղկեսցիս,	Вы будете	ծաղկեսջիք,
Онъ, а, о будетъ	ծաղկեսցի,	Они, ѣ будутъ	ծաղկեսցին.

Հրամայական եղանակ:

Цвѣти,	ծաղկեա́ց,	Цвѣтите,	ծաղկեցարո́ւք,
пусть онъ, а, о цвѣтетъ,	ծաղկեսցէ,	пусть они, ѣ цвѣтутъ,	ծաղկեսցե՛ն.

Ընդունելութիւն ներկայ: Цвѣтущій, ծաղկող,
անցեալ: Цвѣтшій, ծաղկեալ:

Դերբայ. Цвѣтя, цвѣтущій, ծաղկելով, կամ է ծաղկելն,
Цвѣтши, ծաղկելով, է ծաղկելն, ծաղկեալ.

Ըստ այսմ խոնարհին և հետագայ բայքդ՝ гнѣсть, սեղմել, ճնշել, և՝ խուել, гнѣту, սեղմեմ, և՝ խուեմ. плесть, հիւսել, плету, հիւսեմ. честь, ընթեռնուլ, чту, ընթեռնում.

Անկանոն բայս՝ печь, եփել, կամ թխել՝ խոնարհի այսպէս.

Աներևոյթ անկատար. Печь, Եփել,
յաճախական. Пекать, եփել.

Սահմանական եղանակի ներկայ.

Եզակի.		Յոգնակի.	
Я пеку,	Եփեմ,	Мы печемъ,	եփեմք,
Ты печешь,	եփես,	Вы печете,	եփէք,
Онъ, а, о печетъ,	եփէ.	Они, ѣ пекутъ,	եփեն.

Անկատար.

Я пекъ,	եփէի,	Мы пекли	եփէաք,
Ты ла,	եփէիր,	Вы	եփէիք,
Онъ, ло, а, о	եփէր,	Они, ѣ	եփէին.

Յարակատար և գերակատար.

Я пекалъ,	եփեալ եմ, էի.	Мы пекали	եփեալ եմք, էաք,
Ты ла,	եփեալ ես, էիր,	Вы	եփեալ էք, էիք,
Онъ, ло, а, о	եփեալ է, էր,	Они, ѣ	եփեալ են, էին.

Ապառնի.

Я буду печь	եփելոց եմ,	Мы будемъ печь	եփելոց եմք,
Ты будешь	եփելոց ես,	Вы будете	եփելոց էք,
Онъ, а, о 6 удетъ	եփելոց է,	Они, ѣ будутъ	եփելոց են.

Հրամայական եղանակ ։

Пеки ты, եփեա՛, Пеките вы, եփեցէ՛ք,
пусть онъ, а, о. печетъ, եփեսցէ՛, пусть они, ѣ пекутъ, եփեսցե՛ն ։

Ընդունելութիւն ներկայ ։ Пекущій, եփող ։
անցեալ ։ Пекшій, եփեալ ։

Դերբայ ներկայ ։ Печа, եփելով, յեփելն,
անցեալ ։ Пекши, եփելով, յեփելն, եփեալ ։

Ըստ այսմ օրինակի խոնարհին և յաջորդ բայքդ՝ влечь, ձգել, (քարշելով տանիլ, կամ բռնութբ ածել ։) влеку, ձգեմ, влечешь, ձգես ։ сѣчь, ծեծել, ձաղկել, հատանել, խայթել, сѣчешь, ծեծես ։ течь, հոսիլ, կամ գնալ (ջրոյ) կամ կաթել, և հեղեղուկ իրաց ըստ ծակտիս արտաքս թորիլ, теку, հոսիմ, течешь, հոսիս ։ толочь, լեսուլ, լսել, կամ ծեծել, толку, լեսում, толчешь, լեսուս ։ Գիտելի է ։ զի 'ի վերոյեդեալ բայիցդ՝ են՝ որք անկանոն համարին առ մեզ ։ և են՝ որք կանոնաւորք ։ իսկ առ ռուսս առ հասարակ են անկանոն ։ ըստ որում եդան 'ի վերոյ ։

Գիտելիք ինչ 'ի վր անցելոյն բայից ։

Գիտելի է Ա ։ Զի ներկայ ժամանակն է երբեմն սկիզբն և գլուխ 'ի խոնարհմունս բայից ։ Բ ։ Զի անցեալ անկատարն բղխի յառաջին և յերրորդ դիմաց ներկայ ժամանակի, և յանգի ա ։ 'ի алъ, ялъ. բ ։ 'ի илъ, ылъ. գ ։ 'ի олъ, улъ. դ ։ 'ի ѣлъ, елъ.

Գ ։ Անցեալ կատարեալն կազմի յանկատարէն՝ յաւելլով 'ի նա ըստ մեծի մասին զմի 'ի յաջորդ նախադրութեանցդ ։ Այս ։ воз, вз, вы, в, до, за, из, на, низ, о, об, от, по, пере, под, при, про, раз, со, с, у.

Յայս կատարեալ ժամանակէ ծագին այլ կատարեալ ժամանակք յամենայն իսկ խոնարհմունս ։

Դ ։ Անցեալ միոյ նուագի ժամանակն յանգի 'ի վանկս нуль, յորմէ

և ըղձական բովանդակ միոյ նուագի ժամանակք 'ի խոնարհմունս բայից ։

Ե ։ Յարակատար և գերակատար ժամանակքն ելք 'ի բազումս յանգին 'ի ивалъ, կամ ывалъ, մերթ եւս 'ի валъ, алъ. Բայց երբ չունի բայն զայսոսիկ վերջաւորութիւնս 'ի յարակատար և 'ի գերակատար ժամանակս, յայնժամ յարի յանկատար ժամանակն էական բայիս 'ի չէզոքական սեռի бывало, լինէի, լինէիր, լինէր, կամ լեալ եմ, լեալ ես, լեալ է. լեալ էի, լեալ էիր, լեալ էր ։

Զ ։ Ապառնի անկատարն կազմի յաներևոյթ եղանակէ և 'ի բայէդ буду, և стану, եղէց. որ. буду ходить, գնացից. стану работать, ծառայեցից, կամ ծառայելոց եմ ։

Է ։ Ապառնի կատարեալն զօդեալ նախադրութք համդերձ ը կատարեալ ժամանակի, ընդունի զվերջաւորութիւնս ներկայի ։

Ը ։ Ապառնին միոյ նուագի յանգի 'ի վանկս ну, և բաղկանայ յանցեալ միոյ նուագի ժամանակէ՝ 'ի բաց բարձմամբ տառիցս՝ лъ.

Դարձեալ դիտելի է Ա ։ Զի հրամայական եղանակն յանկատար և 'ի կատարեալ ժամանակս յանգի 'ի й, и, կամ ь. բայց 'ի միոյ նուագի ժամանակն 'ի ни, нь. Բ ։ 'Ի կատարեալ և 'ի միոյ նուագի ժամանակս ը յոգնականին 'ի կէր ածի առաջին դէմն ։

Գ ։ Զի անկատարն աներևոյթ եղանակի, կատարեալն և միոյ նուագի ժամանակքն կազմին 'ի նոյն իսկ ժամանակաց սահմանական եղանակի. փոխելով ելք 'ի բազումս զտառս лъ, 'ի ть. և եւ՝ 'ի բայս յանգեալս 'ի гу, և ку, աներևոյթ եղանակն ընդունի զտառս чь.

Դ ։ Զի ներկայ ժամանակն ընդունելութե յերկաքանչիւր լծորդութս եւ կազմի յերրորդ դիմաց յոգնակի սահմանականի ներկայի, փոխելով զտառս ть, 'ի щiй.

Ե ։ Անցեալ անկատար, կատարեալ և միոյ նուագի ժամանակքն ընդունելութե կազմին 'ի նոյն իսկ ժամանակաց սահմանական եղանակի, փոխելով զտառս лъ, 'ի вшiй. բայց մերթ եւս 'ի шiй, համդերձ այլով նախընթաց բաղաձայն տառիւ ։

Դ. Ներկայ ժամանակն դերբայի յանգի 'ի a, я, կամ чи, և բա-ղադրի 'ի բայս առաջին լծորդութե յառաջին դիմաց եզակի ներկայի փոխելով զվերջաւորեալ տառդ y, 'ի a, կամ я. իսկ 'ի բայս երկրորդ լծորդութե բաղադրի յերրորդ դիմաց յոգնակի Թուոյ:

Ե. Անկատար, կատարեալ և միոյ նուագի ժամանակքն դերբայի բաղկանան 'ի նոյն իսկ ժամանակաց սահմանականին և յանգին 'ի въ և 'ի ши, համդերձ նախընթաց տառիւ в, կամ այլով բաղձայն տառիւ:

Զ. Դերբայք ևս 'ի կատարեալ ժամանակի միօրինակ յանգին ներ-կայիւն համդերձ. օր. возненавидя, ատելով. примирясь, հաշտելով. եւն:

Գոյականի պատշաճեալ կրաւորական բայից:

Գիտելի է. Ա: Զի սահմանականի ներկայն կրաւորական բային յան-գի իբրև զներգործականի յոգնակի առաջին դէմն ներկային յաւելու-էական բայդ՝ есмь; եմ, գոմ, կամ бываю, լինիմ, եղանիմ:

Բ. Բազում մի բայք յանգին յայսմ ժամանակի 'ի омъ. օր. блюдомъ бываю, պահպանիմ, պահիմ. եւն:

Գ. Բայք, որք ոչ ընդունին զվերջաւորութիւն мъ, 'ի կիր ածին ձայ-նակրականաւ կամ ներգործականաւ. օր. փոխանակ ասելոյ онъ почи-таемъ есть, լաւ ևս է ասել, онъ почитается, նա համարի կամ պատուի. կամ его почитаютъ. եւն:

Դ. Անցեալ և ապառնի ժամանակք կազմին յանցեալ ժամանա-կաց ներգործականին, փոխեալ զտառդ лъ, 'ի нъ, կամ 'ի тъ, և յաւելլով զէական բայդ՝ былъ, էի, էիր, էր. կամ եղէ, եղեր; և буду, եղէց. Իսկ եթէ բայ ինչ չունիցի զայսպիսի վերջաւո-րութիւն, 'ի գործ ածին նոքին վերջաւորութիւն мъ ներկայ ժամանակի:

Ե. Էական բայդ՝ былъ 'ի կատարեալ և 'ի միոյ նուագի ժամանա-կս լինի 'ի բազում Թուոջ. օր. Церковь сооружена, եկեղեցին կանգնեցաւ. домъ построенъ, տունն կառուցաւ. եւն:

Զ. Յամ ժամանակս հրամայական եղանակի, յաւելուն յաջորդ

բառքդ ընդունելութիւն կրճատեալ է եզականին. օր. будь, լե՛ր, կամ пусть будетъ, եղիցի՛, կամ լիցի՛. իսկ է յոգնականին будьте, երո՛ւք, կամ եղերո՛ւք, կամ пусть будутъ, եղիցի՛ն, լիցի՛ն:

Է. Ընդունելութիւն յաներևոյթ եղանակի դնի 'ի տրական հոլովն 'ի վերջաւորութ կրճատեալ, և է բովանդակ ժամանակս յաւելու 'ի նոյն բառդ быть; լինել, կամ լինիլ, կամ եղանիլ:

Ընդունելութիւն ներկայ ժամանակն յանգի 'ի мый, և անցեալն 'ի ный կամ тый. Ներբայքն յամ ժամանակս կազմին յընդունելութեց՝ համառօտելով 'ի ъ, յաւելեալ 'ի ներկայ ժամանակն զբառդ будучи, լինելով, կամ գոլով. իսկ 'ի յանցեալն, զբառսդ бывши, կամ бывъ. եղեալ, լինելով, է լինելն.

'Ի վախճանի, արժան է գիտել և զայս. զի է օրինակի բայից ներգործականաց և չեզոքականաց, ընդունելին և խոնարհին նմանապէս ներգործակերպ և կրաւորակերպ չեզոքականք և հասարակք. պահելով յամ ուրեք լոկ զսովորական վերջաւորութիւն ся, կամ сь.

Յաղագս ընդունելութեան:

Ընդունելութիւն (причастіе պրիչաստիե) է անուն ածական բղխեալ 'ի բայից և ունի զպարագայս է բայից և է անուանց:

Ծանի՛ր առաւել. զի իւրաքանչիւր ընդունելութե փակէ է իւրև զբայ և զյարաբերական դերանունդ который, ая, ое, կամ кто; որ. կամ որ ոք. օրինակ իմն. Человѣкъ, не желающій добра ближнимъ (կամ: которой не желаетъ) погрѣшаетъ противъ правилъ закона, այր, ո՛չ ցանկացող բարւոյ մերձաւորին, (կամ որ ո՛չ ցանկայ) մեղանչէ է դէմ օրինացն կանոնաց. Человѣкъ гордящійся (կամ который гордится) своими знаніями поступаетъ противъ правилъ мудрости. այր փքացող է գիտութիւն իւր (կամ որ փքանայ) վարի հակառակ կանոնաց իմաստութե: Ընդունելութիւնք ունին զկերպ սեռս է բայից յորոց և կազմին. որգոն ներգործական, կրաւորական, չեզոքական,

ներգործակերպ չեզոքական ; կրաւորակերպ չեզոքական , կամ ձայնակրական և հասարակ ։ Ունին ևս զչորս ժամանակս , ներկայ , անկատար , կատարեալ , և մի նուազի . և հոլովին ըստ օրինակի անուանց ածականաց . ունելով զսեռս , զթիւս , և զհոլովս ։

Ընդունելութիւնք 'ի կիր ածեալք ըստ զօրութեան անուանց ածականաց ունին զաստիճանս բաղդատականութեան . օր. знающій , գիտող կամ գիտնական , знающѣе , գիտնագոյն , самый знающій , կարի գիտնական . совершенный , կատարեալ , совершеннѣе , կատարելագոյն , совершеннѣйшій ; ևս կատարելագոյն ։

Յաղագս դերբայի ։

Դերբայն (дѣепричастіе դեեպրիչաստիէ) նշանակէ զհանգամանս և զեղանակս գործողութեան կամ կրելութեան այնր բայի , առ որ վերաբերի նոյն . օրինակ իմն . Человѣкъ упражняясь прилѣжно въ наукахъ и читая полезныя книги , просвѣщаетъ свой разумъ . այր՝ պարապելով զմակացութիւնս եռանդեամբ հոգւոյ և ընթեռնլով զգիրս օգտակարս լուսաւորէ զմիտս իւր ։

Ծանի՛ր աստանօր . զի իւրաքանչիւր դերբայ պարունակէ զմի յն և եղէ 'ի յետադաս բառից . և 'ի մեզ պատասխանէ գործիական և կամ , ներգոյական հոլովոյ աներևոյթ բայից . որպիսիք են սոքին . когда , երբ , յորժամ . какъ , իբրև ; մինչ . поелику , զի , ըստ որում , որով հետև . օր. Уча другихъ , сами учимся . փոխանակ ասելոյ когда учимъ другихъ , что и сами учимся . յուսուցանելն , կամ ուսուցանելով զայլս , մեք ևս՝ ուսանիմք . որ նոյն է ասել , մինչ ուսուցանեմք զայլս , մեք ևս ուսանիմք ։

Սեռք և ժամանակք դերբայից են ըստ ընդունելութեանց . բայց ոչ ունին զթիւս , զդէմս , և ոչ ևս կարեն հոլովիլ ։

Յաղագս մակբայից :

Մակբայն (որ нарѣчіе նարեչիէ լսի առ ռուսս) է մի յանհոլով մասանց բանի, որ տիրապէս դնի 'ի վերայ բայի վասն նշանակելոյ զպարագայս գործողութեան կամ զորպիսութիւն նորին : Նոյն բազում մակբայք դնին նմանապէս և 'ի վերայ ածական անուանց վասն ցուցանելոյ զպարագայս նոցին, որպէս . Богъ есть колико благъ, толико правосуденъ. այնքան է Աստուած բարի, որքան է արդարադատ. Онъ учился лѣниво, и за то строго былъ наказываемъ. Նա ուսանէր հեղգաբար, ուստի և պատժեալ լինէր չարաչար : Մակբայն 'ի ռուսաց լեզուոջ բաժանի 'ի տասըն և ինն տեսակս, որք և կոչին առ մեզ ըստ յաջորդ գրելոյդ :

Ժամանակական (время վրեմեա :)

Теперь, այժմ, զարդիս, այժմոյս : днесь, այսօր, կամ այժմ, այժմիկ : доднесь, ցայսօր : нынѣ, այսօր, եւ՝ այժմ : донынѣ, кам понынѣ, ցարդ, ցայժմ, ցայսօր : отнынѣ, յայսմհետէ, այսուհետև : уже, ահա, ահաւասիկ, ասանիկ : древле, 'ի հնումն : издревле, 'ի վաղուց, 'ի վաղնջուց : вчера, и вчерась, երեկ : давно, վաղուրեմն, վաղու եւս : издавна, 'ի վաղուց, 'ի վաղնջուց : всегда, завсегда, навсегда, միշտ, յար, հանապազ : иногда, երբեմն, մերթ : прежде, նախ, նախ առաջին : сперва, յառաջագոյն : послѣ, յետոյ, զկնի, ապա : покамѣстъ, пока, մինչ, մինչև, մինչդեռ : доколь, доколѣ, մինչև, ցերբ : искони, 'ի սկզբանէ : впередъ, այսուհետև, յառաջ, կամ նախ :

Տեղական (мѣсто մեստօ :)

Гдѣ, куда, ուր, յո՛, ուրանօր : здѣсь, тутъ, աստ, աստանօր : вездѣ, ամենայն ուրեք : нигдѣ, ո՛չ ուրեք : тамъ, туда, тутъ, անդ, անդէն : внѣ, արտաքս, 'ի դուրս, արտաքոյ : извнѣ, отвнѣ, արտաքուստ, արտաքոյ : индѣ, инуда այլուր : сюда, այսր, աստ, աստանօր : никуда, нѣкуда, ո՛չ ուրեք : вспять, յետս : отвсюду, յամենայն կողմանէ,

յայմ դիմաց ։ доселѣ, ցայս վայր, և այսր ։ отселѣ, отсюда, աստ-
ուստ, անտի ։ оттуда, անտի ։ внутрь, 'ի ներքս, 'ի ներքս կոյս ։
снаружи, արտաքուստ, առ արտաքս ։ спереди, յառաջոյ, զառաջ-
եաւ ։ сзади, յետուստ ։ далеко, далече, հեռի, 'ի բաց, 'ի բացեայ։
издалека, издалече, 'ի հեռուստ, 'ի բացուստ ։ близко, մերձ,
մօտ ։ свыше, 'ի վերուստ ։ вверхъ, выспрь, 'ի վեր ։ около, եզրե,
շուրջ ։ среди, 'ի միջի, 'ի մէջ, ը մէջ ։ мимо, առ ընթեր, հուպ ։

Որակական. (качество, կաչեստվօ ։)

Хорошо, բարւոք ։ дурно, յոռեգոյն, վատթարագոյն ։ прямо,
ուղղակի, ուղղայն, դէպ ուղիղ ։ напрасно, тщетно, вотще, всуе,
և суе, զուր, 'ի զուր, տարապարտուց, ը վայր, 'ի նանիս, վայրա-
պար, ը ունայն ։ удобно, անաշխատ, պատշաճապէս, դիւրաւ, труд-
